Ազգ
Azg
1 ՆՈՅԵՄԲԵՐ 2013 ՈՒՐԲԱԹ 188(5271)
ISSN: 1829-1651

# Ստորագրահավաք-կոչ՝ վերանայելու գորգի ցուցադրման մերժումը

***«Ազգը» արդեն գրել է, որ ցեղասպանությունից վերապրած հայ որբերի ձեռքերով հյուսված եւ 1925 թվին որպես երախտագիտության արտահայտություն Մ. Նահանգների նախագահ Կալվին Կուլիջին նվիրված պատմական գորգը Սպիտակ տան նախնական համաձայնությունից հետո պետք է դեկտեմբերի 16-ից մշտական ցուցադրության դրվեր Սմիթսոնյան ինստիտուտում, բայց հանկարծակի Սպիտակ տունը մերժել էր տրամադրել գորգը ինստիտուտին:***

**ՀՅԴ Հայ դատի գրասենյակից (ANCA) ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ կոնգրեսականներ Ադամ Շիֆը (դեմոկրատ՝ Կալիֆոռնիայից) ու Դեյվիդ Վալադաոն (հանրապետական՝ Կալիֆոռնիայից) իրենց գործընկերների աջակցությունն են պահանջել ստորագրելու մի նամակ, որով կոչ է արվում Սպիտակ տանը՝ վերանայելու հայ որբերի հյուսած պատմական գորգը Սմիթսոնյան ինստիտուտում չցուցադրելու որոշումը: Հիշեցնենք, որ երկու կոնգրեսականները Հայերի ցեղասպանության ճանաչման «H. Res. 227» բանաձեւի գլխավոր հովանավորներն են: Նրանք Սպիտակ տանն ուղղված իրենց նամակ-կոչում նշել են. «Հայ որբերի հյուսած գորգը Ամերիկայի պատմության մաս է կազմում եւ պատկանում է ամերիկյան ժողովրդին: Տասնամյակներ շարունակ ամերիկահայերը ճանապարհներ են որոնել գորգը հանրային ցուցադրության դնելու համար եւ Սպիտակ տան ու պետքարտուղարության թույլտվությունն են խնդրել տարբեր առիթներով: Դժբախտաբար նրանց պահանջը ցարդ չի իրականացվել»:**



*Կոնգրեսականներ Ադամ Շիֆը եւ Դեյվիդ Վալադաոն*

**«Public Radio International» հանրային ռադիոյին տված իր հարցազրույցի ընթացքում «Վաշինգտոն փոստ» թերթի արվեստի մեկնաբան, լրագրող Ֆիլիպ Քեննիկոտը նշել է, որ եթե Սպիտակ տունը ոչ մի բացատրություն չի տվել մերժման վերաբերյալ, ամենայն հավանականությամբ պատճառը Թուրքիայի եւ նրա ժխտողականության հանդեպ Ամերիկայի կառավարության ունեցած հարգալից վերաբերմունքն է: Ըստ Հայ դատի գրասենյակից ստացված հաղորդագրության, ամբողջական հարցազրույցը կարելի է դիտել http://www.anca.org/orphanrug/the world կայքում:**

*Տես էջ 8*

# Ցաբրնոխը, Մնացականյանը, ԵՄ-ն ու ՄՄ-ն

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**



Հայաստանի դեգերումը Մաքսային միության եւ ԵՄ-ի միջեւ շարունակում է մնալ շատերին հուզող թեմա: Երեկ տարբեր դրսեւորումներով թեման շուռումուռ տվեցին նաեւ խորհրդարանում՝ նախ արտաքին ոլորտում հատկացումների եւ հանձնաժողովներում բյուջետային քննարկումների ընթացքում, ապա եւ լրագրողների հետ ԵՄ-Հայաստան խորհրդարանական հանձնաժողովի համանախագահ Միլան Ցաբրնոխի (հայ համանախագահ Սամվել Ֆարմանյանի հետ համատեղ) հանդիպման ընթացքում: Ցաբրնոխին, օրինակ, Սերժ Սարգսյանի հետ հանդիպման ընթացքում Մաքսային միություն մտնելու հիմնավորումներից ազգային անվտանգության շարժառիթն էր համոզիչ թվացել, թեեւ նկատեց, թե իր խնդիրը չէ համոզիչ-անհամոզիչը գնահատել: Նրա խոսքով՝ սեպտեմբերի 3-ից հետո մեկը մյուսի հետեւից Հայաստան այցելած պատվիրակություններն ափսոսում են Հայաստանի կատարած շրջադարձի համար, ու չնայած հարգանքին՝ ՄՄ մտնելու Հայաստանի որոշման հանդեպ, այդ պատվիրակությունների ներկայացուցիչները չեն զլացել նշել, որ ՄՄ անդամակցումը անհնարին է դարձնում Ասոցիացման համաձայնագրի ստորագրումն՝ իր տնտեսական բաղադրիչով հանդերձ: Իսկ Հայաստանի պաշտոնյաների կողմից հայտնվող այն տեսակետները, թե Հայաստանը ԵՄ-ի հետ համագործակցությունը շարունակում է՝ Ցաբրնոխի համար հասկանալի էր, քանի որ Հայաստանն առանց Եվրամիության հետ համագործակցության կարող է դառնալ ռուսական գավառ: Եվրամիությունն էլ կշարունակի Հայաստանի հետ համագործակցությունն այնքան, որքան հնարավոր կհամարի Հայաստանին հեռու պահել տվյալ հեռանկարից:

*Տես էջ 8*

# Կառավարությունը սահմանեց նոր սերնդի ՀԴՄ-ների գները եւ տեղադրման ժամկետները

*Դրանք տարբեր կլինեն խոշոր եւ փոքր շրջանառություն ունեցող տնտեսվարողների համար*



Գեղարքունիքի մարզում տեղի ունեցած կառավարության երեկվա արտագնա նիստում որոշվեց թույլատրել պետական եկամուտների կոմիտեի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը՝ 2012 թվականի արդյունքներով 58,35 միլիոն դրամից մինչեւ 500 միլիոն դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) իրացումից հասույթ ունեցող ընկերությունների համար նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների իրացման գին սահմանել առավելագույնը մինչեւ 280 հազար դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), իսկ 58,35 միլիոն դրամից պակաս իրացումից հասույթ ունեցող ընկերություններին՝ մինչեւ 150 հազար դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

Ինչ վերաբերում է խոշոր՝ 500 մլն եւ ավելի դրամ շրջանառություն ունեցող ընկերություններին, ապա նրանք նոր սերնդի ՀԴՄ-ների համար կվճարեն սահմանված 369 հազար դրամը: Այն ընկերություններին, որոնք անցյալ տարի ունեցել են 500 մլն դրամից պակաս շրջանառություն եւ գնել են նոր ՀԴՄ-ներ 369 հազար դրամով, գնային տարբերությունը հետ կվերադարձվի:

Միաժամանակ որոշվեց, որ փոքր՝ 58.35 դրամ շրջանառություն ունեցող տնտեսվարողների համար նոր ՀԴՄ-ի տեղադրումը պարտադիր է լինելու 2014-ի հուլիսի 1-ից, մյուսների համար՝ 2013-ի դեկտեմբերի 1-ից:

**Ա. Մ.**

# ԱԱԳ-ն հերքում է համացանցային լրտեսման հետ կապված լուրերը




ԱՄՆ-ի Ազգային անվտանգության գործակալության (ԱԱԳ) ղեկավար Քիթ Ալեքսանդերը պաշտոնապես հերքել է այն տեղեկությունները, թե իր գերատեսչությունը ապօրինաբար հետեւել է Yahoo! եւ Google համացանցային ընկերությունների գործունեությանը: Այդ մասին հաղորդում է CNN հեռուստաընկերությունը:

ԱԱԳ-ի ղեկավարը «բացարձակ անճշտություն» է անվանել այն տեղեկատվությունը, թե ապօրինաբար կորզվել են համացանցային ընկերությունների սերվերներում պահվող տվյալները: «Համացանցային ընկերությունների սերվերներից մենք տեղեկություններ ստանում ենք լոկ այն պատճառով, որ նրանք համագործակցում են մեզ հետ: Նրանք պարտավոր են մեզ հետ համագործակցել ոչ թե դատարանի խնդրանքի կապակցությամբ, այլ այն պատճառով, որ դա իրենց անմիջական պարտականությունն է: Այս առումով միանգամայն հստակ ցուցումներ կան դատարանի որոշումներում», հայտարարել է Ալեքսանդերը Վաշինգտոնում՝ կիբեռանվտանգությանը նվիրված կոնֆերանսում:

Հատուկ ծառայության ղեկավարը նաեւ հայտնել է, որ գործակալությունը երբեք չի «կոտրել» համացանցային ընկերություններին պատկանող տվյալների զետեղարանները: «ԱԱԳ-ն չի զբաղվում նման «կոտրանքներով»: Դա անօրինական է: Մենք միշտ գնում ենք ՀԴԲ-ի գծով դատական կարգադրություններ ստանալու ճանապարհով: Եվ նման կարգադրությունների քանակը մամուլի հաղորդածից զգալիորեն քիչ է. խոսքը ոչ թե միլիոնների, այլ հազարների մասին է: Դրանք գրեթե բոլորը կապված են ահաբեկչական սպառնալիքի հետ եւ չեն վերաբերում ԱՄՆ-ի քաղաքացիներին», ընդգծել է հետախուզական գերատեսչության ղեկավարը:

Ավելի վաղ՝ հոկտեմբերի 30-ին «Վաշինգտոն փոստ» թերթի հրապարակած տեղեկությունների համաձայն, ԱԱԳ-ն կորզում է Yahoo!-ի եւ Google-ի սերվերներում պահվող տվյալները: Նյութի հեղինակները վկայակոչում էին ԱԱԳ եւ ԿՀՎ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենի տրամադրած փաստաթղթերը:

Թերթի հրապարակած տվյալների համաձայն, ԱԱԳ-ն համացանցային ընկերությունների կառույցներ է թափանցել MUSCULAR համակարգի միջոցով: Ըստ «Վաշինգտոն փոստի» տեղեկությունների, համակարգը 30-օրյա ժամանակահատվածում մշակել է համացանցով դրա օգտատերերի ուղարկած տեքստային եւ ձայնային նյութերին առնչվող շուրջ 180 մլն զանազան գրանցումներ: MUSCULAR-ի հավաքած տեղեկությունները հասանելի են եղել նաեւ Կառավարական կապի բրիտանական կենտրոնին (GCHQ):

**Պ. Ք.**

# Ընթացիկ

## Ինչպես պայքարել արտագաղթի դեմ. մասնագետների առաջարկություններ

Դաշնակցական **Արծվիկ Մինասյանի** բնորոշմամբ՝ արտագաղթը Հայաստանի ազգային անվտանգությանը սպառնացող երեւույթ է եւ անհրաժեշտ է կոնկրետ քայլեր իրականացնել արտագաղթի դադարեցման ուղղությամբ: Մինասյանն առաջարկում է խնդրի լուծումը դիտարկել որպես ազգային պլատֆորմ եւ արտագաղթի վտանգները հաղթահարելու համար ներգրավել բոլոր քաղաքական ուժերին՝ իշխանություն, ընդդիմություն, այլընտրանք, հասարակական կազմակերպություններ եւ Հայ առաքելական եկեղեցի:

Ըստ Մինասյանի՝ արտագաղթելու առաջին պատճառն այն է, որ Հայաստանում չեն կարողանում աշխատանք գտնել, կամ աշխատանքին համապատասխան վարձատրություն չկա: Որպես պատճառ պատգամավորն առանձնացնում է նաեւ արդարադատության նկատմամբ հավատի բացակայությունն ու ապագայի անորոշությունը:

Արտագաղթի վտանգները նվազեցնելու նպատակով Դաշնակցությունը ներկայացրել է «Մենք ապրելու ենք մեր երկրում» ծրագրային դրույթները, որոնցից մի քանիսն արդեն ներառվել են կառավարության ծրագրերում: Բացի ծրագրային դրույթներից՝ դաշնակցական պատգամավորն առաջարկում է վերականգնել ապագայի հանդեպ հասարակության հավատն ու վարել կադրային ճիշտ քաղաքականություն: «Աշխատատեղերի ստեղծման ծրագիրը շատ կարեւոր է, եւ Դաշնակցությունը կառավարությունից պահանջում է հրապարակել աշխատատեղերի ստեղծման «ճանապարհային քարտեզ»: Մենք համոզված ենք, որ կառավարության հայտարարած 100000 աշխատատեղերի ստեղծումը բավարար չէ», ասաց պատգամավորը ՄԱԱ-ում կազմակերպված քննարկմանը, միաժամանակ հավելելով, որ չեն ցանկանում իշխանությունների մեջ դավաճաններ տեսնել: Թեպետ Դաշնակցությունը քննադատում է իշխանությունների ծրագրերը, սակայն նրանք հակված չեն այն մտքին, որ իշխանությունների մեջ կան մարդիկ, ովքեր կանխամտածված դատարկում են երկիրը: Պատգամավորը կարեւոր է համարում, որ երկրի համար բախտորոշ ժամանակահատվածում հասարակությանը միավորի ոչ թե միմյանց դեմ չարությունը, այլ միասնական լինելն ու խնդիրները համախմբված լուծելու ցանկությունը:

Արտագաղթի կանխարգելման ուղղությամբ «Արագա» բարեգործական հիմնադրամի նախագահ, «Հանրային ցանց»-ի համակարգող **Թամարա Աբրահամյանի** գնահատմամբ էլ՝ անհրաժեշտ է աշխատանքային խումբ ստեղծել, որը պետք է զբաղվի արտագաղթի դեմ պայքարով: Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու «APSC» քաղաքական եւ սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան **Սամվել Մանուկյանը** կարծում է, որ անհրաժեշտ է տնտեսական բարեփոխումներ կատարել, հակառակ պարագայում անհնար կլինի դադարեցնել արտագաղթը: Մանուկյանը համոզված է, որ եթե մեր երկիրը կարողանա բնակչությանն ապահովել աշխատատեղերով, ապա արտագաղթի ցուցանիշները կնվազեն: Դա են ապացուցում նաեւ իր կազմակերպության իրականացրած սոցիոլոգիական հարցումների արդյունքները: «Բնակչության 50 տոկոսը հայտարարել է, որ հնարավորության դեպքում պատրաստ է արտագաղթել երկրից այլ երկրում աշխատանք գտնելու նպատակով»:

Հ. Հ.

## Wi-Fi ցանց եւ համակարգչային տեխնիկա՝ Հայ-ռուսական սլավոնական համալսարանին



Համալսարանի համակարգչային սենյակը համալրվել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի կողմից որպես նվիրատվություն տրամադրված՝ «Home-Zone Turbo» սակագնային պլանով գերարագ ինտերնետ ապահովող՝ 3G/Wi-Fi երթուղիչով, 10 համակարգչով, ինչպես նաեւ ինտերակտիվ գրատախտակով՝ իր լուսարձակով եւ լազերային տպիչով: Համալսարանին ընդհանուր առմամբ տրամադրվել է շուրջ 5 մլն դրամի սարքավորում:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում Wi-Fi անկյուններ ու հանգույցներ, ինչպես նաեւ համակարգչային լսարաններ ստեղծելու գաղափարը նպատակ ունի օգնելու բուհերին իրենց ուսանողների եւ դասախոսական անձնակազմի համար ստեղծել իրապես «անսահմանափակ» հաղորդակցության հնարավորություն: Wi-Fi տեխնոլոգիան համարվում է կրթական հաստատությունում շարժական արագ ինտերնետ հասանելիություն ապահովելու ամենաարդյունավետ միջոցներից մեկը:

«Մեր ցանկությունն է, որ Հայաստանի բուհերը չզիջեն աշխարհի առաջավոր համալսարաններին թե՛ տեխնիկական հագեցվածության, եւ թե՛ կրթության որակի առումներով: Wi-Fi-ը համարվում է ինտերնետ հասանելիության ապահովման առաջնային միջոց: Այսօր Wi-Fi կապի առկայությունը պարտադիր պայման է կրթական ռեսուրսները հասանելի դարձնելու առումով: Այդ է պատճառը, որ ՎիվաՍել-ՄՏՍ-ը շարունակաբար աջակցում է բուհերին՝ կրթական ոլորտում Wi-Fi տեխնոլոգիայի լայն կիրառման հարցում»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

ՎիվաՍել-ՄՏՍ-ը երիտասարդներին շարունակաբար հնարավորություն է ընձեռում նոր հորիզոններ բացահայտելու եւ մարտահրավերներ դիմակայելու համար: Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը գիտակցում է, որ կրթությունը մեր երկրի առաջընթացն ու բարեկեցությունը երաշխավորող կարեւորագույն լծակ է եւ այդ տրամաբանությամբ է առաջնորդվում՝ կրթության ոլորտում նախագծեր իրականացնելիս:

## «ՄՏՍ կոնեկս E1820» USB մոդեմ՝ նոր գնով

ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղեկացնում է, որ այժմ «ՄՏՍ կոնեկս E1820» USB մոդեմը կարելի է ձեռք բերել առավել մատչելի գնով՝ վճարելով 40 000 դրամ նախկին 57 900 դրամի փոխարեն:

Իսկ «ՄՏՍ կոնեկս» անսահմանափակ սակագնային պլաններից մեկին առնվազն մեկ տարով բաժանորդագրվելու դեպքում այս մոդեմը կտրամադրվի անվճար:



## Մախսային միությանը Թուրքիայի անդամակցումն անհրաժեշտ է

**Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն, թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանի դիտարկմամբ՝ Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող զարգացումների առումով որոշակիորեն սրվել են թուրք-ամերիկյան հարաբերությունները: Թուրքիան փորձում է ավելի խորացնել իր ինքնուրույն խաղը Մերձավոր Արեւելքում, ինչը գնալով ավելի շատ դժգոհություններ է առաջացնում Միացյալ Նահանգներում եւ Իսրայելում:**

**Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ռուբեն Սաֆրաստյանը նշեց, որ Թուրքիան, փաստորեն, աջակցում է «Ալ Ղաիդային», որպեսզի վերջինս Սիրիան դարձնի իր գործունեության հիմնական կենտրոնը: Սակայն Միացյալ Նահանգները մտահոգված է, որ դա կարող է ուղղվել Արեւմուտքի դեմ: Թուրք-ամերիկյան հարաբերությունների սրման պատճառներից մեկն էլ եղավ Թուրքիայի որոշումը հակաօդային պաշտպանության համակարգերը Չինաստանից գնելու վերաբերյալ: Այս որոշումը ցույց է տալիս, որ Թուրքիան հրաժարվում է նման սպառազինություն գնել ՆԱՏՕ-ի իր դաշնակիցներից:**

**Անդրադառնալով նաեւ Մաքսային միությանը Թուրքիայի անդամակցության հարցին՝ բանախոսն ասաց, որ ներկայումս դա անհրաժեշտ է. «Դա Թուրքիայի խաղի մի մասն է, որը պայմանավորված է ԱՄՆ-ի ու Եվրոմիության հետ հակասություններով»:**

Ի. Պ.

## Ե՞րբ կավարտվի Իսակով-Լենինգրադյան ճանապարհի կառուցումը

**Իսակովի պողոտան եւ Լենինգրադյան փողոցն իրար միացնող նոր ճանապարհի կառուցումը դրական նախաձեռնություն էր, եւ շահագործելուց հետո կթեթեւանա մի քանի առանցքային փողոցների երթեւեկությունը: Այն առանց գումարներ հասկացնելու՝ կառուցապատողին ճանապարհի կառուցման դիմաց տարածքներ տրամադրելով կառուցելը նույնպես Երեւանի քաղաքապետարանն ու կառավարությունը վատ չէին մտածել: Սակայն այս նույն ճանապարհի կառուցումը վերածվեց մի ամբողջ տանջալից սերիալի Երեւանի երեք խոշոր վարչական շրջանների բնակիչների համար, որոնք հարկադրված են ամեն օր երթեւեկել այդ հատվածով անցնող հասարակական տրանսպորտով:**

**Նախ՝ մեկ տարուց ավելի տեւեց մարզահամերգային համալիրի մոտ կառուցվող ստորգետնյա անցման գոնե վերգետնյա հատվածի կառուցումը: Ընդ որում, կառուցապատող «Սահակյանշին» ընկերությունն այդ ընթացքում, անցյալ տարվա ամռանն առնվազն 2-3 ամիս ընդհանրապես ոչ մի շինարարական աշխատանքներ չէր կատարում, իսկ քաղաքապետարանն էլ ոչ մի բացատրություն չէր պահանջում դրա համար: Մինչդեռ, խցանումներն այդ հատվածում այդ ողջ ընթացքում մշտական էին, օրվա գրեթե բոլոր ժամերին:**

**Ի վերջո, վերոնշյալ անցման վերգետնյա հատվածը շահագործման հանձնվեց միայն այս տարվա կեսերին: Այդ ժամանակ «Սահակյանշինի» տնօրենը հայտարարում էր, թե մինչեւ սեպտեմբեր ճանապարհն ամբողջությամբ պատրաստ կլինի: Սա այն դեպքում, երբ ճանապարհն ամբողջությամբ պետք է ավարտված լիներ 2013-ի փետրվարին, ինչի մասին մեր թերթին տրամադրած պաշտոնական պատասխանում հաղորդել էր «Երեւանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ»-ը անցյալ տարվա դեկտեմբերին: Տարոն Մարգարյանին էլ պարբերաբար զեկուցվում էր, որ աշխատանքներն ընթանում են սահմանված գրաֆիկով: Թե ինչպե՞ս է դա հնարավոր, որ ընթանան սահմանված գրաֆիկով, բայց արդեն 2013-ի նոյեմբերն է եւ ճանապարհը դեռեւս կառուցվում է, քաղաքապետը դարձյալ երբեւէ չի հարցրել կառուցապատողին: Այլապես, այդ նույն «Սահակյանշինը» իր հայտարարած ճանապարհի կառուցման ավարտի հերթական ժամկետը, որը լրանում է այսօր՝ նոյեմբերի 1-ին, գոնե պետք է պահպաներ: Ինչպես տեսնում ենք, դա չկա, եւ ճանապարհի կառուցումը լավագույն դեպքում կավարտվի մինչեւ տարեվերջ՝ այդպիսով 2013-ի փետրվարի փոխարեն՝ ընդհուպ մոտենալով 2014-ի փետրվարին: Փաստորեն, «սահմանված գրաֆիկով աշխատելով», շինարարությունն ավարտվում է 1 տարի ուշացումով:**

**Սակայն հիմա էլ շինարարները չեն կենտրոնանում մարզահամերգային համալիրի մոտակայքի ստորգետնյա անցումն ու նրան հարակից շրջադարձները առաջնահերթ շահագործելու, այդ հատվածում երթեւեկությունը թեթեւացնելու, ապա նոր ճանապարհի մնացած հատվածները կառուցելու վրա: Եվ այս դեպքում էլ ոչ քաղաքապետը, ոչ մեկ ուրիշ պաշտոնյա չեն կարողանում կամ չեն գլխի ընկնում պահանջել դա կառուցապատողից: Մեզ մնում է միայն մխիթարվել, որ այդուհանդերձ, ճանապարհի կառուցումը շուտով կավարտվի, եւ այդ հատվածի գրեթե երկամյա խցանումներից եւ գերբեռնվածությունից վերջապես կազատվենք:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Արթինյան» ոսկերչական ընկերության զարդերը՝ 3 աշխարհամասերում

Ինչպես գիտենք, ոսկերչական բիզնեսը ընտանեկան է, որը փոխանցվում է սերնդեսերունդ, իսկ բազմաթիվ հայ ընտանիքներ հայտնի են իրենց տարիների ու տասնամյակների պատմություն ունեցող ոսկերչական գործունեությամբ:

Հայերի հայտնի ոսկերչական միավորում է «Արթինյան» ոսկերչական եւ ադամանդագործության ընկերությունը:

«Արթինյան» ընտանեկան ոսկերչական ժառանգությունը մոտ 60 տարվա պատմություն ունի: Այն սկիզբ է առել Արթինյան եղբայրներից, որոնք բնիկ դամասկոսահայեր են: 1950-ական թվականներին եղբայրներից մեկը ստեղծեց «Արթինյաններ» ադամանդագործության ընկերությունը: 50-ականների վերջին եւ 60-ականների սկզբին Արթինյան եղբայրներից մյուսի օգնությամբ ստեղծվեց արդեն «Արթինյան» ադամանդագործության ընկերության ցանցը: Իսկ ահա եղբայրներից երրորդը, արտագաղթելով Կանադայի Տորոնտո քաղաք, հիմնադրեց «Արթինյան» ոսկերչական ընկերության կենտրոն: Եվ ահա երեք աշխարհամասերում Արթինյանների ոսկերչական աշխատանքները տարածվեցին:

Այժմ Արթինյանների երկրորդ սերունդն է զբաղվում ոսկերչական բիզնեսով՝ Արտո, Սարո եւ Մարալ Արթինյանները:

1995թ. երկրորդ սերնդի ներկայացուցիչ Արտո Արթինյանը, գնալով Թաիլանդ, հաստատվում է այնտեղ եւ եղբոր՝ Սարո Արթինյանի հետ հիմնում ոսկերչական գործարան, որը 1997 թ. թեեւ փոքր էր, սակայն այսօր ունի մոտավորապես 300 աշխատակից, իսկ գալիք տարի ծրագրվում է աշխատակիցների թիվը հասցնել 400-ի: Իսկ Մարալ Արթինյանը վերջերս հաստատվելով Նյու Յորքում, «Արթինյան» ոսկերչական ընկերության աշխատանքներն այնտեղ է ծավալում:



Այսօր ընկերությունը ամենահարգվածներից է այդ շուկայում, ինչպես Ծայրագույն Արեւելքում, այնպես էլ շատ եւ շատ այլ երկրներում: Այն հարգված է ինչպես որպես բրենդ, այնպես էլ իր զարդերի որակով, ձեւավորմամբ:

Ընկերությունն այսօր Բանգկոկում համագործակցում է եվրոպական ճանաչված ոսկերչական բրենդների հետ եւ մշակում է տարբեր հավաքածուներ:

Ի դեպ, «Արթինյան» ոսկերչական ընկերության ղեկավարներից Արտո Արթինյանն շուրջ երկու տարի Թաիլանդում Հայաստանի պատվո հյուպատոսն է նաեւ: «Համայնքային առումով տարեկան 4-5 անգամ հայկական գաղութում տարատեսակ միջոցառումներ ենք կազմակերպում՝ ինչպես հայկական ազգային տոներ, այնպես էլ հիշում եւ նշում ենք Ցեղասպանության տարելիցը»: Հետաքրքրվելով, թե որքան հայ կա Բանգկոկում, մեր զրուցակիցն ասաց, որ նրանց թիվը չի գերազանցում 60-ը: «**Ազգ**»-ի հետ զրույցում Արտո Արթինյանն ասաց, որ իբրեւ պատվո հյուպատոս ինքը պատասխանատու է Հայաստանի քաղաքացիների համար եւ նրանց խնդիրներին փորձում է լուծում տալ:

«Արդյոք Թաիլանդում բնակվող հայերի զավակները տիրապետո՞ւմ են հայոց լեզվին» հարցին ի պատասխան Արտո Արթինյանն ասաց. «Ցավոք, չկա ոչ մի՝ նույնիսկ փոքրիկ ուսումնական հաստատություն, ուր ուսուցանվի հայոց լեզուն, եւ երիտասարդներից ոչ ոք հայոց լեզվին չի տիրապետում»:

Անդրադառնալով «Արթինյան» ընկերությանը նշենք, որ, Արտո Արթինյանի փոխանցմամբ, որոշ ժամանակ Արթինյանները բացել են դպրոց, որտեղ երեխաներին սովորեցրել են ոսկերչական աշխատանքի վարպետություն: Ի դեպ, այսօր նրանցից մի քանիսը համալրել են «Արթինյան» ոսկերչական ընկերության շարքերը:



Ընտանեկան այս բիզնեսը կփոխանցվի նաեւ Արթինյանների երրորդ սերնդին, Արտո Արթինյանն ասաց, որ իր 8-ամյա զավակը եւս հետաքրքրվում է ոսկերչությամբ եւ արձակուրդներին գալիս ու տարբեր մոդելներ է ստեղծում, սակայն թե ինչ կլինի ապագայում՝ դժվար է ասել:

«Արթինյան» ոսկերչական ընկերությունում մեծ դեր ունի նաեւ ծագումով լիբանանահայ Պարույր Գույումճյանը, որը մարկետինգի մասնագետ է եւ վերոնշյալ ընկերությունում աշխատում է 6-7 տարի: Պ. Գույումճյանի հավաստմամբ, ընկերության ցանկությունն է աշխարհի տարբեր մասերում ունենալ «Արթինյան» կենտրոններ եւ շուկայական առումով տարածում գտնել: Ընկերությունը ցանկություն ունի Հայաստանում եւս մասնաճյուղ բացել:

«Ոսկերչական ոլորտում «Արթինյանների» հաջողություններից մեկը վստահությունն է բիզնեսի նկատմամբ եւ երկարաժամկետ հարաբերությունները հաճախորդների հետ»,- ասաց Պարույր Գույումճյանը, որը, ի դեպ, Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության սան է, ինչպես Արտո Արթինյանը:

Պ. Գույումճյանի հավաստմամբ, մեծանուն ոսկերչական ընկերություններում միշտ հայերի դերը եղել է ու կա, իսկ այսօր Բանգկոկում հայերին են պատկանում մոտավորապես տասը փոքր եւ միջին ոսկերչական ընկերություններ:



Անդրադառնալով տարբեր ազգերի առեւտրականներին, Պ. Գույումճյանը նշեց, որ Հոնկոնգում ոսկերչական ոլորտի մեջ էթնոգրաֆիկ բաժանումներ կան, օրինակ՝ հրեաները եւ հնդիկները ադամանդի վաճառականությամբ են զբաղվում, իսկ իտալացիները՝ ոսկե զարդերի, շվեյցարացիները՝ ժամացույցների, մյուս մասն էլ խառնդավառ մի խումբ է, որը այդ ոլորտներում ցանկանում է գործունեություն ծավալել, դրանք էլ հայերն են:

Ընդունված է ասել, որ հրեաները հայերին չեն սիրում: Ինչպիսի՞ն են առեւտրական հարաբերությունները հայերի եւ հրեաների միջեւ՝ ի պատասխան Պարույր Գույումճյանն ասաց. «Ոսկերչության, ադամանդագործության մեջ կան ազգային շահեր, բայց չկան ծայրահեղ մտածողությամբ մարդիկ: Ընդհանրապես իշխող հոգեբանությունը՝ առողջ առեւտրի հոգեբանությունն է: Օրինակ՝ արաբական երկրներում հրեաների հետ թեեւ լարված հարաբերություններ կան, սակայն հրեաների տիրապետության ներքո գտնվող ադամանդի շուկայում աշխույժ առեւտուր են անում»:

Արտո Արթինյանն էլ ապագա հայ ոսկերիչներին խորհուրդ տվեց. «Ոսկերչությունը մեզ համար ավանդական արվեստ է, եւ ցանկանում եմ, որ նոր սերունդը նորարարական մոտեցումներով ներկայացնի իրենց պապենական արվեստը»:

Ի դեպ, աշխարհագրական սփռվածությամբ «Արթինյան» ոսկերչական ընկերության տարածումը չի սահմանափակվում Բանգկոկով եւ Կանադայով, հասնում է մինչեւ Դուբայ ու Մոսկվա:

Արտո Արթինյանի հավաստմամբ, իրենց ընկերության նպատակն է բարձր որակի զարդեր պատրաստել. «Հատուկ զարդեր ենք արտադրում բարձր խավի մարդկանց համար, ինչպես նաեւ պալատական վերնախավի պատվերներ ենք կատարում: Օրինակ՝ մեր հաճախորդներից ոմանք գնալով Մեծ Բրիտանիա՝ մեզ պատվիրում են զարդեր՝ թագուհուն նվիրելու համար»:

Ա. Արթինյանի հավաստմամբ, իրենց «Սարտորո» բրենդը, բացի շքեղ եւ թանկարժեք զարդերից, ներառում է մատչելի եւ ամենօրյա կրելուն հարմար զարդեր նաեւ:

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

# Վիրահայոց ուխտավորների խումբը Հայաստանում եւ Արցախում

Վիրահայոց թեմի ուխտավորների խումբը՝ հովանավորությամբ Հայաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության եւ ղեկավարությամբ ու օրհնությամբ վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, ճանաչողական եւ համագործակցության այցով հոկտեմբերի 24-ից 28-ը այցելել է Հայաստան եւ Արցախ:

Վիրահայոց թեմի մամլո հաղորդագրության համաձայն՝ ուխտավորների կազմում են եղել թեմի աշխատակիցները, երիտասարդներ Թբիլիսիից, Ախալցխայից, Բաթումից եւ Մառնեուլից: Ուխտավորների հետ Հայաստանում ու Արցախում է եղել նաեւ ամերիկահայ բանաստեղծուհի Սոնա Վանը:



Ուխտավորները Թբիլիսիից Երեւան ճանապարհին Տավուշի մարզի Հաղարծին վանքում մասնակցել են առավոտյան ժամերգությանը եւ հանդիպել վանական համալիրի վանահայր Արիստակես վարդապետ Այվազյանին, որը ուխտավորներին ներկայացրել է վանքի պատմությունը եւ վերջին տարիներին կատարված վերանորոգչական աշխատանքները:

Երեւանում՝ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում նախարարության պաշտոնյաների հետ: Այնուհետեւ ուխտավորներն այցելել են Սբ Հռիփսիմե, Սբ Գայանե վանքերը, Սուրբ Էջմիածնի Մայր տաճար, ապա՝ Խոր Վիրապի վանք:

Արդեն Արցախում ուխտավորները հյուրընկալվել են Շուշիի առաջնորդարանում եւ հանդիպել թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի հետ: Թեմակալ առաջնորդը քաջալերել է, որ Արցախի եւ Վրաստանի հայ երիտասարդությունը շարունակեն փոխադարձ այցելություններով ամրապնդել կապը միմյանց հետ: Շուշիում ուխտավորները հյուրընկալվել են նաեւ Արցախի մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունում, հանդիպել նախարար Նարինե Աղաբալյանի հետ:

Ուխտավորների հաջորդ հանգրվանը եղել է Շուշիի Արվեստի կենտրոնը, որտեղից էլ նրանք մեկնել են Գանձասարի վանական համալիր:

Հոկտեմբերի 27-ին ուխտավորների խումբը Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Փրկիչ եկեղեցում մասնակցել է սբ պատարագին: Օրվա պատարագիչը վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն էր: Պատարագից հետո նրանք հյուրընկալվել են Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի Շուշիի առաջնորդարանում, եղել Արցախյան հերոսամարտի ազատամարտիկների թանգարանում:

Հոկտեմբերի 28-ին ուխտավորները Ստեփանակերտում հանդիպել են ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հետ: Նախագահը կարեւորել է նման ծրագրերում ավելի շատ երիտասարդների ներգրավումը, որպեսզի ավելի սերտ լինի նրանց կապը հայրենիքի հետ եւ նաեւ աշխատանքները Արցախի համապատասխան կառույցների հետ լինեն հստակ համակարգված եւ առավել արդյունավետ:

Ուխտավորները մեծ տպավորություններով են մեկնել Արցախից. «առաջընթաց, բարեկարգված ճանապարհներ, պատերազմի հետքերից ձերբազատված քաղաքներ եւ գյուղեր, ժողովրդի մեջ գերիշխող կենսունակ տրամադրություն»:

Վիրահայոց թեմը, հանձին առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, փոխադարձ այցելության հրավերով դիմել է Արցախի մշակույթի եւ երիտասարդության հարցերով նախարարությանը, Գրողների միությանը եւ Արցախի թեմի հոգեւոր դասին: Հրավերը սիրով ընդունել են:

**Վ. Պ.**

# Նույնականության հիմնախնդիրը ինտեգրացիոն գործընթացներում

Խորհրդային համակարգի փլուզումից հետո մարդկությունը բախվեց միաբեւեռ աշխարհի «ծախքերին», որոնք միտված էին արժեքային կողմնորոշիչների միատեսականացմանը՝ հիմնված արեւմտյան երկրներում արդեն գործող արժեհամակարգի վրա: Մասնավորապես հետխորհրդային երկրներում տեղի ունեցավ հասարակության արժեքների վերագնահատում, որն իր հերթին առաջ էր քաշում արմատական փոփոխությունների անհրաժեշտության խնդիրը ոչ միայն ամբողջությամբ վերցրած հանրության գիտակցության, այլեւ քաղաքացիների առօրյա հոգեբանության մեջ: Անկախության հաստատման առաջին տարիները բնորոշ էին թե՛ հասարակական կյանքում լիբերտարիսական արժեհամակարգի արմատավորմամբ, թե՛ նրան հարակից, գործնականում արեւմտյան երկրներից լիովին ընդօրինակված, ազատական-ժողովրդավար կառույցների ներդրմամբ: Արեւմտյան արժեքաինստիտուցիոնալ համակարգի բացարձակ կիրառումը մի միջավայրում, որ ձեւավորվել էր բազում տասնամյակների, անգամ դարերի ընթացքում, չէր կարող ընթանալ հարթ, առանց հակասությունների ու ցնցումների: Միեւնույն ժամանակ այդ երկրներում տիրապետող հանրային գիտակցության անհամատեղելիությունը ժողովրդավար կառույցների որոնող էության հետ հանգեցնում էր վերջիններիս նկատելի աղավաղմանը:

Սակայն 20-րդ դարի 90-ականների սոցիալ-քաղաքական փոխակերպումները դարձան շուկայական տնտեսության հիմքը, խորացրին հասարակության սոցիալական ստրատիֆիկացիան, պայմաններ ստեղծեցին քաղաքական բազմակարծության առաջացման համար: Ձեռնարկվեցին որոշակի քայլեր՝ իշխանության ճյուղերի գործառույթները տարանջատելու եւ նոր իմաստ հաղորդելու հետխորհրդային հասարակության քաղաքական ամբողջ համակարգին: Ընդհանուր առմամբ հին կառավարման մեքենան ապամոնտաժվեց, եւ փորձեր արվեցին ձեւավորելու հասարակական նոր հարաբերություններ:

Ստեղծված հանգամանքներում հետխորհրդային հասարակությունների որոշ ժողովուրդներ բախվեցին հարյուրամյակների ընթացքում ձեւավորված սեփական ինքնության պահպանման, մյուսները՝ արժեքների կողմնորոշման համընդհանուր միատեսականացման ոչ այնքան բարենպաստ պայմաններում ինքնանույնականացման բարդ ուղին անցնելու անհրաժեշտության խնդրին: Բոլոր այս հասարակությունները վաղ թե ուշ պետք է կանգնեին ընտրություն կատարելու անհրաժեշտության առջեւ՝ հրաժարվել այսպես կոչված արեւմտյան արժեքների պարտադրված համակարգից ու հայտնվել մեկուսացված վիճակում, ընդունել այն ամբողջովին, զուգահեռաբար սպառնալիքներ ստեղծելով նույնականացմանը, կամ էլ կիրառել այնքանով, որքանով դա չի կարող խոչընդոտել ազգի ինքնանույնականացմանը: Վերջին ճանապարհը միաբեւեռ աշխարհի պայմաններում այլընտրանքի բացակայության պատճառով գործնականում դառնում է անհնար:

Համաշխարհային ներգրավվածության գործընթացները միտված են էական ճշգրտումներ մտցնելու արդի աշխարհակարգում: Այսպես, արեւմտյան հասարակությունների օրակարգում այսօր ներառված է անդրատլանտյան միավորման ստեղծման նախագիծը, որը շատ քաղաքագետներ ոգեւորված անվանում են «անդրատլանտյան քաղաքակրթություն»՝ նպատակադրված ընդգծելով վերջինիս բացառիկությունը: Հասկանալի է, որ քաղաքական-տնտեսական միավորի նման ձեւավորումն ընդունակ է վերջնականապես ամրապնդելու արեւմտյան ուժային կենտրոնի եւ նրան բնորոշ լիբերտարիսական արժեհամակարգի համաշխարհային տիրապետությունը: Համաշխարհային ասպարեզում քաղաքական ուժերի նման բաշխվածության պայմաններում շատ ազգերի ինքնության հաստատման ջանքերը մեքենայաբար հավասարեցվում են զրոյի:

Այլ նպատակ է հետապնդում մի շարք երկրներում սեփական ներգրավվածության կառույցի ստեղծումը: Որպես օրինակ առաջին հերթին կարող են ծառայել այն միավորումները, որոնց նախաձեռնողներն են եղել այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ռուսաստանը, Չինաստանը, Հնդկաստանը, Բրազիլիան եւ այլն: Նկատելի է նրանց՝ համաշխարհային կենտրոն ձեւավորելու նպատակաուղղվածությունը, որը վերջիններիս թույլ կտա պահպանել ոչ միայն իրենց տնտեսությունների մրցունակությունը, այլեւ հնարավորություն կընձեռի ապահովելու անհրաժեշտ պայմաններ արժեքային համակարգի կենսունակության համար, պահպանելու հանրային կյանքի հոգեւոր-բարոյական ոլորտի ինքնօրինակությունը: Նման նախագծերի հաջող իրագործումն ի վերջո կարող է ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ երկբեւեռ, անգամ բազմաբեւեռ աշխարհակարգի ձեւավորման համար:

Հետխորհրդային եվրասիական տարածքի նշանակալի հատվածում պետությունների միավորման ստեղծման խնդիրը պետք է դիտարկել հենց այս տեսանկյունից: Պետությունները, որոնք ներգրավված են ապագա Եվրասիական միության ձեւավորման գործընթացում, ոչ միայն կարող են խուսափել եվրոպական որոշ պետություններին բաժին ընկած ապրանքների իրացման շուկաների վերածվելու ճակատագրից, այլեւ հոգ տանել ազգային արժեքային կողմնորոշիչների անաղարտության համար: Ավելին, այդ նպատակի իրագործման համար առկա են որոշակի նախադրյալներ. չէ՞ որ այս երկրների ազգերը սոցիալ-տնտեսական զարգացման համարյա միատեսակ մակարդակից զատ ունեն մի շատ կարեւոր ընդհանրություն եւս՝ մտածելակերպը, որի մասին բազմիցս նշել են Ռուսաստանի եւ Ղազախստանի նախագահները:

Մեր ազգերն աչքի են ընկնում լավ փոխըմբռնողականությամբ, որը պայմանավորված է ինչպես անցած պատմական ուղիով, այնպես էլ մեր հասարակությունների առջեւ ծառացած խնդիրների ու հիմնահարցերի նմանողականությամբ: Հարցն ամենեւին էլ այն չէ, որ մեր ազգերը դեռ ձեռք չեն բերել արեւմտյան արժեքների մակարդակին համապատասխան գիտակցություն: Չէ՞ որ ամեն ազգ ունի ազատական-ժողովրդավարական արժեքների սեփական ընկալում: Այդ արժեքներն ինքնին արգասիքն են եվրոպական հասարակական գիտակցության դարավոր կերտման եւ կրում են արեւմտյան հասարակության կյանքում ու մտածելակերպում խորապես արմատացած սովորույթների կնիքը: Այդ պատճառով էլ դրանք լիովին կիրառելի են միայն արեւմտյան իրականության առկայության պայմաններում:

Արեւմտյան արժեքները չի կարելի դիտարկել որպես դրական կամ բացասական, արդարացի կամ անարդարացի լինելու տեսանկյունից: Հանրության կողմից պահանջարկ վայելող ցանկացած արժեքային կողմնորոշում, առավել եւս, եթե նպաստում է ինքնորոշման գործընթացի իրականացմանը, արժանի է հանդուրժողական վերաբերմունքի, որի մասին, ի դեպ, վկայում են հենց արեւմտյան արժեքային սկզբունքները: Անցումային շատ երկրների ներկայիս խնդիրն է իրենց արժեհամակարգը հնարավորինս համապատասխանեցնել հանրության ճշմարիտ կարիքներին ու շահերին եւ հասարակության մեջ այն դարձնել գերակայող:

Նույնականության դրսեւորման հիմքում ընկած է մտածելակերպը, եւ միայն հետխորհրդային հասարակությունների մտածելակերպի ընդհանուր հասկանիշների որոշակի պատկերն է համընկնում ազատամտական սկզբունքներին: Մնացած առումներով դրանք համապատասխանում են պահպանողական թեքում ունեցող ազատականությանը, ինչը մեծ նշանակություն է հաղորդում ազգերի ինքնության պահպանմանն ու հանրության մեջ ավանդույթների դրսեւորմանը: Արդյունքում առնչվում ենք գաղափարական երկու մրցակցային համակարգերին՝ պահպանողականությանն ու ազատականությանը բնորոշ մտածելակերպերի պատմականորեն բացառիկ, հազվագյուտ միահյուսմանը, որը կոչված է հավասարակշռելու հասարակության կենսունակության հետագա զարգացումը:

Համընդհանուր քաղաքական գիտակցության մեջ ազատական արժեքների հարուցած խնդիրների բացահայտման նպատակով կատարված սոցիոլոգիական հետազոտությունները վկայում են, որ հետխորհրդային երկրների բնակչության զգալի մասը դրականորեն է վերաբերվում դրանցից շատերին: Այս առումով կարելի է թվարկել նվիրվածությունը կրոնական, գաղափարախոսական եւ քաղաքական հանդուրժողականությանը, մարդկային կյանքի՝ որպես գերագույն արժեքի գիտակցումը, օրենքին հպատակվելը, սեփականության անձեռնմխելիությունը, քաղաքացիների բարեկեցության միջոցով կառավարության հզորության գնահատումը, մարդու իրավունքների ու ազատությունների պահպանումը, անհատի արժանապատվության պաշտպանությունը:

Պետք է նաեւ նշել, որ հետխորհրդային հասարակության սոցիալական տարբեր խմբերն ամենեւին էլ միատեսակ չեն մեկնաբանում ազատական արժեքները: Իրականում սահմանազատումը կատարվում է ոչ թե մարդու ազատությունների իրավունքների տարաբնույթ ընկալման, այլ իշխանություն ձեռք բերած զանազան քաղաքական ուժերի կողմից իրականացվող գործունեության հարցում: Մարդկանց անհանգստացնում է ոչ այնքան պետության տեսակը, որքան վերջինիս փոխհարաբերությունը հասարակության եւ անհատի հետ, այսինքն՝ շեշտադրվում է այդ հարաբերությունների բարոյական կողմը:

Արդյունքում առանձնակի հետաքրքրություն է առաջանում սովորույթների, հաջորդականության եւ կայունության վրա հիմնված, աստիճանական բարեփոխություն ու ծայրահեղ միջոցների բացառում ապահովող քաղաքական պահպանողականության խնդրի հանդեպ: Պահպանողականությունը լայն առումով արտահայտում է հանրային կյանքի հավաքական սկզբնավորումն ու այդ պատճառով ավելի հարազատ է հետխորհրդային հասարակության մտածելակերպին: Նրանց համար կենսականորեն անհրաժեշտ արժեքներն են հավասարությունը, սոցիալական արդարությունը, պետության օժանդակությունը:

Վերնշյալին է առնչվում նաեւ հետխորհրդային հասարակության մտածելակերպի մեկ ուրիշ բնորոշ հասկանիշ՝ պետության նույնականացումը մեծ ընտանիքի հետ: Այս, ըստ էության կոնֆուցիական գաղափարից էլ ծնվում է համազգային միասնության՝ որպես հոգեւոր մտերմության դրսեւորումը, ինչպես նաեւ «անհոգի» իրավական նորմերը բարոյական արժեքներով ու բարոյախոսական սկզբունքներով փոխարինելու ձգտումը: Այս տեսակետից էլ անհատի եւ պետության փոխհարաբերության բնույթը հետխորհրդային երկրներում, ի տարբերություն Արեւմուտքի, սահմանվում է ոչ այնքան որպես կառավարվողների եւ պետության համաձայնություն, միտված օրենքների պահպանմանը, որքան իբրեւ վերջիններիս խախտման դեպքում երկու կողմերի լուռ «համաձայնություն»:

Ավանդապաշտությունը, հավատն ու կողմնորոշումը դեպի բարոյախոսական չափանիշները հետխորհրդային հասարակության մտածելակերպում արգասավոր հող են նախապատրաստում «ազգային» դեմքով պահպանողականության առաջացման համար: Ժամանակակից հետխորհրդային հասարակության մեջ մարդկանց՝ դեպի պահպանողական արժեքներ կողմնորոշվածության առավել ցայտուն նախանշաններից են արդարության՝ մարդու իրավունքներից առավել էական լինելու վստահությունը, ավանդույթների հանդեպ հավատարմությունը, համոզմունքը, թե պետության ու ժողովրդի շահերը գերադաս են առանձին քաղաքացու շահերից, պետության՝ որպես կարգուկանոնի եւ բարեկեցության հաստատման հզոր գործոնի տեղակայումը, ընդհանուր նպատակների իրականացման ընթացքում քաղաքացիների որոշ իրավունքների սահմանափակումը:

Հետխորհրդային հասարակության մտածելակերպում գերակայում է պետական կառավարման որոշակի տիպար. ժողովուրդը կառավարությանն է հանձնարարում ոչ այնքան իշխանության որոշակի գործառույթների իրականացումը, որքան սեփական ճակատագիրը: Այս առումով էլ հասարակության մտածելակերպում որպես արժեք եւ հիմք առաջ է գալիս հովանավորության տեղակայումը: Սակայն այս հովանավորությունն ունի ազգային-հայրենասիրական բաղադրիչ, որն ամբողջ ազգին կողմնորոշում է համախմբվելու իրեն հավատարիմ ու նվիրված պետության շուրջը: Պետության հովանավորությունը դիտվում է որպես «բարություն» եւ հանրության հանդեպ իշխանության պարտավորվածություն: Հետխորհրդային հասարակության մտածելակերպում որպես իդեալական կառավարման ձեւ առաջին հերթին ընդունելի է միահեծան (պատասխանատու) եւ արդարացի (բարոյական) իշխանությունը: Կառավարման այս «տիպարն» ունի չափավոր կողմնորոշում դեպի ավտորիտար իդեալ, որը մշտապես համակցվում է կոլեկտիվ ժողովրդավարության ամբոխապետական իմաստի հետ: Պահպանողականությունը, որպես աշխարհայացք, ապահովում է հասարակական կյանքի հոգեւոր-բարոյական տարրերի աշխուժացումը, ավանդույթների եւ ազգային հիմքերի հանդեպ հարգալից վերաբերմունքը, այն մերձենում է ազգային ինքնագիտակցությանն ու նպաստում է ազգերի ինքնորոշմանը:

Հետխորհրդային հասարակության պահպանողական-ազատական մտածողությունն ըստ էության հասարակության գիտակցության առավել բարձր բանական մակարդակում համալրվում է առաջ քաշված «եվրասիականության» գաղափարով: Եվրասիականության ժամանակակից գաղափարն իր հիմքում խորապես ազատական է, իրատեսական եւ ժողովրդավար: Սակայն նման ազատականությունը «սահմանափակվում» է առկա պահպանողական բնույթի մշակութաազգային առանձնահատկություններով ու ավանդույթներով: Տվյալ պարագայում մեր առջեւ ծառանում է ժամանակակից հետխորհրդային հասարակությունների համար մեծ պահանջարկ ունեցող պահպանողական ազատականության գաղափարախոսությունը:

Այսօր մենք գործ ունենք արմատապես ձեւափոխված եվրասիականության գաղափարի հետ, որը զինված է կենսակայուն ազատական-ժողովրդավարական բոլոր գաղափարներով եւ դրանք հարմարեցրել է հետխորհրդային անցումային հասարակությունների իրողություններին: Մի կողմից՝ որքան էլ արտասովոր հնչի, այդ գաղափարը ներգրավվածության ընդարձակման պայմաններում ամեն կերպ նպաստում է եվրասիական տարածաշրջանում բնակվող ժողովուրդների ազգային ինքնության ամրապնդմանը, իսկ մյուս կողմից՝ օգնում գործնականում կիրառել համաշխարհային հնչեղություն ստացած ազատական համակարգին բնորոշ այն արժեքները, որոնք պահանջարկ են վայելում հետխորհրդային հասարակության մեջ եւ ունեն համամարդկային նշանակություն: Ըստ էության լուծվում է ազգային անվտանգության ապահովման հիմնական հարցերից մեկը:

Ժամանակակից համաշխարհային ներգրավվածության գործընթացներն անկողմնակալ երեւույթ են: Պետությունների քաղաքական եւ սոցիալ-տնտեսական փոխհարաբերությունների ներկայիս մակարդակում դրանցից ոչ մեկը չի կարող անմասն մնալ այդ շարժումից ու ինքնամեկուսանալ: Սակայն յուրաքանչյուր երկիր ազատ է ընտրելու իր զարգացման այս կամ այն որոշակի ուղղությունը: Նման ընտրությունը ճակատագրական է հատկապես այն պետությունների համար, որոնք չեն կարողացել հաղթահարել անկախ զարգացման դժվարությունները, ձեւավորել կայուն ու կենսունակ քաղաքական համակարգեր եւ մրցունակ տնտեսություններ, ինչպես նաեւ ունեն որոշակի խնդիրներ արտաքին քաղաքականության ասպարեզում: Նման պետությունների բազում հրատապ խնդիրների լուծման հնարավորությունները նշանակալիորեն աճում են այն դեպքում, եթե այդ ընտրությունն իրականացվի այն միությունների օգտին, որոնցում ներգրավված պետություններն ունեն սոցիալ-տնտեսական զարգացման համարյա միատեսակ մակարդակ, ընդհանուր մտածելակերպ եւ ձգտում են պահպանել իրենց ազգերի ինքնությունը: Այն պետությունները, որոնք մասնակցում են ներգրավվածության գործընթացին, որն ուղղված է միաբեւեռ աշխարհակարգի ամրապնդմանն ու զարգացմանը, համարձակվում են, եթե ոչ ամբողջովին, ապա մասամբ կորցնելու իրենց ինքնությունն ու զրկվելու ինքնարտահայտման հնարավորությունից, ինչն ի վերջո կարող է բացասաբար անդրադառնալ նույնականացման գործընթացի վրա: Ընդհանուր առմամբ նման երկրներն ստիպված են շարունակել իրենց ոչ երկարատեւ գոյությունը «օտար» արժեքների պարտադրված աշխարհում:

ԱՇՈՏ ԵՆԳՈՅԱՆ
Քաղաքական գիտությունների դոկտոր,
ԵՊՀ քաղաքական գիտության պատմության եւ տեսության ամբիոնի վարիչ

# Ռիֆաս Բալին՝ հակասեմականության եւ հայերի ցեղասպանության ժխտման մասին

Մինչեւ վերջերս, ըստ Տորոնտոյից ստացված հաղորդագրության, շարունակվում էին Ռիֆաս Բալիի նորագույն գրքի ներկայացման արարողությունները Մ. Նահանգներում եւ Կանադայում: Մերձավոր Արեւելքի երկրներում կատարվող իրադարձությունների ֆոնի վրա նրա վերջին գիրքը՝ «Model Citizens of the State: The Jews of Turkey During the Multi-Party Period (Fairlergh Dickinson University Press, 2012) («Պետության տիպար քաղաքացիները. Թուրքիայի հրեաները երկրի բազմակուսակցական ժամանակաշրջանում»), Թուրքիայում ապրող հրեաների պայքարն է նկարագրում իրենց սահմանադրական իրավունքների համար՝ 1950-ական թվերից մինչեւ մեր օրերը:



Գրքում, բացի հակասեմական երեւույթների եւ դրանց նկատմամբ թուրքական կառավարության դիրքորոշման նկարագրություններից, ներկայացված են նաեւ մանրամասներ, թե ինչպես են թուրքաբնակ հրեաների ղեկավարները ներգրավվում ԱՄՆ Կոնգրեսում հայերի ցեղասպանության ճանաչման դեմ մղված թուրքական քարոզչական արշավի մեջ: Ընդհանուր առմամբ գիրքը նաեւ խոր ուսումնասիրության է ենթարկում Թուրքիայում ապրող փոքրամասնությունների վիճակը:

«The Donme: Jewish Converts, Muslim Revolutionaries and Secular Turks» «Դյոնմեները. հրեա հավատափոխները, մահմեդական հեղափոխականները եւ աշխարհիկ թուրքերը») գրքի հեղինակ Մարկ Դեյվիդ Բայերը, անդրադառնալով Բալիի գրքին, ասել է. «Այս խիստ ինքնատիպ հատորի հրատարակությամբ Ռիֆաս Բալին իրեն հաստատում է որպես Թուրքիայում ապրող հրեաների մասին լավ տեղեկացված հեղինակություն»: Իսկ Վանդերբիլտ համալսարանի արդի հրեական պատմության մասնագետ, պրոֆեսորի օգնական Ջուլիա Ֆիլիպս Քոհենը գրել է. «Հատորը լրջորեն ուսումնասիրված, հստակ ձեւակերպված է եւ համոզիչ փաստարկներով հագեցած: Թուրքիայում ապրող հրեաների հարաբերությունների (ժամանակակից Թուրքիայի բնակիչների եւ ղեկավարների հետ) բարդ պատմությունը վարպետորեն է ներկայացված եւ բացահայտում է այն լարախաղացի դերը, որ հրեաները հաճախ կատարել են երբեմն զոհի, կասկածյալի, երբեմն էլ տիպար փոքրամասնության կերպարն ստանձնելով: Գիրքը երկար ժամանակ կօգտագործվի որպես հիմնավոր աղբյուրագիտական աշխատանք»:

Բալին անկախ գիտաշխատող է՝ մասնագիտացած հատկապես Թուրքիայում ապրող հրեաների պատմության գծով: Թղթակից անդամ է «Ալբերտո-Բենվենիստ» հրեական ուսումնասիրությունների կենտրոնի (Սորբոնի համալսարանին կից): 2009-ին արժանացել է այդ կենտրոնի մրցանակին: «Զորյան ինստիտուտի» Հայ դատի կոմիտեի, Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի (ՆԱԱՍՐ), ԹՄՄ-ի, Դպրեվանքի սաների միության, Պոլսահայերի կենտրոնի, ՀԲԸՄ-ի եւ այլ կազմակերպությունների աջակցությամբ հոկտեմբեր ամսին նա ներկայացել է Կոլումբիա համալսարանում (Նյու Յորք), Սբ Լեւոն հայկական եկեղեցում, Բրուքլինի հանրային գրադարանում եւ այլ վայրերում:

Հ. Ծ.

# Նյու Յորքում շուտով ծխախոտ չեն վաճառի 21 տարին չլրացած անձանց

*Չափահաս ծխողների թիվը 10 տարում կրճատվել է 1/3-ով*

Նյու Յորքի քաղաքային խորհրդի ընդունած օրինագծի համաձայն, շուտով կարգելվի ծխախոտ եւ գլանակներ (այդ թվում էլեկտրոնային) վաճառել 21 տարին չլրացած անձանց: Ընդունված փաստաթուղթը 30 օրվա ընթացքում պետք է ստորագրի քաղաքագլուխ Մայքլ Բլումբերգը, որը հայտնի է որպես հակածխախոտային արշավների կազմակերպիչ:

«Մենք վստահ ենք, որ այս միջոցառումը հսկայական թվով կյանքեր կփրկի», նշել է օրինագծի հեղինակը՝ քաղաքային խորհրդի պատգամավոր Ջեյմս Գեննարոն: ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը հաղորդում է, որ ներկայումս քաղաքում ծխախոտ կարող են գնել 18 տարին լրացած անձինք. այդ տարիքն է նախատեսված դաշնային օրենսդրությամբ:

Այսպիսով Նյու Յորքը կդառնա տարիքային շեմը 21 տարեկանի բարձրացնող խոշորագույն ամերիկյան քաղաքը: Ներկայումս նման խիստ օրենք գործում է միայն Բոստոնի մոտակայքում գտնվող Նիդեմ քաղաքում (Մասաչուսեթսի նահանգ): Որոշ նահանգներում (Ալաբամա, Ալյասկա, Նյու-Ջերսի, Յուտա եւ այլն) տարիքային ստորին շեմը հասցված է 19 տարեկանի:



Օրինագծի կողմնակիցները հույս ունեն, որ դրա շնորհիվ կնվազի ծխող պատանիների թիվը: Նյու Յորքի առողջապահության վարչության տվյալներով, ծխողների 80 տոկոսը այդ սովորությունը ձեռք է բերել նախքան 21 տարեկան դառնալը:

Ծխախոտ արտադրողները առարկում են, թե նոր օրենքը երիտասարդներին միայն կստիպի գլանակներ գնել «սեւ շուկայում»: Նրանք նաեւ հայտարարում են, թե իշխանությունները արդեն քվեարկելու եւ բանակում ծառայելու իրավունք ունեցող անձանց չպետք է արգելեն ծխել:

Քաղաքագլուխ Մայքլ Բլումբերգը տարիներ շարունակ պայքարում է հանուն առողջ ապրելակերպի: Նա ծխելն արգելել է բոլոր հասարակական վայրերում եւ նույնիսկ առաջարկել է արգելել գլանակների տեղադրումը խանութների ցուցափեղկերում եւ դրամարկղերի մոտ: Սակայն օրենսդիրները մերժել են այդ առաջարկությունը:

Եթե հավատանք վիճակագրությանը, Բլումբերգի ջանքերը որոշակի արդյունք են տվել. վերջին 10 տարում Նյու Յորքում չափահաս ծխողների թիվը կրճատվել է գրեթե 1/3-ով:

ՎԱՐԿԱՆԻՇ

# Ըստ «Ֆորբսի»՝ Պուտինն աշխարհի ամենաազդեցիկ մարդն է

**Ամերիկյան «Ֆորբս» հանդեսի վարկանիշների համաձայն, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը ներկայումս աշխարհի ամենից ազդեցիկ մարդն է: Նա առաջ է անցել ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայից, որն անցած տարիներին քանիցս զբաղեցրել էր ամենաբարձր հորիզոնականը: Այսպիսով, 2013 թ. աշխարհում «կառավարող եռյակի» մեջ վերից վար մտնում են Վլադիմիր Պուտինը, Բարաք Օբաման եւ Չինաստանի նախագահ Սի Ցզինպինը:**



**«Ֆորբսի» բացատրագրում նշվում է, որ Պուտինի ազդեցությունն աճել է Սիրիայի քիմիական զենքի ոչնչացման հետ կապված «շախմատային խաղի» շնորհիվ, իսկ Օբաման իր զորության մի մասը կորցրել է ողջ աշխարհում մարդկանց լրտեսող ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների հետ կապված սկանդալի պատճառով:**

**Հանդեսի 2013 թ. ազդեցիկ մարդկանց ցանկում 4-րդ տեղը զբաղեցնում է Հռոմի Ֆրանցիսկ պապը, 5-րդը՝ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը: Նրան հաջորդում են «Մայքրոսոֆթ» ընկերության ղեկավար Բիլ Գեյթսը, ԱՄՆ-ի Դաշնային պահուստային համակարգի ղեկավար Բեն Բեռնանկեն, Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդուլլահ իբն Աբդուլ Ազիզը, Եվրոպայի ԿԲ նախագահ Մարիո Դրագին: Տասնյակը եզրափակում է Wall Mart խանութների ցանցի տնօրենների խորհրդի նախագահ Մայքլ Դյուկը, որը Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Կեմերոնին անցյալ տարվա 10-րդ տեղից դուրս է մղել 11-րդ տեղ:**

**Աշխարհի ամենաազդեցիկ մարդկանց ցանկում ընդգրկված են 72 հայտնի քաղաքական, տնտեսական եւ հասարակական գործիչներ: Բացի Պուտինից, ցանկում կա եւս 3 ռուսաստանցի. վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը 53-րդ տեղում է, «Ռոսնեֆտի» ղեկավար Իգոր Սեչինը՝ 60-րդ, գործարար Ալիշեր Ուսմանովը՝ 63-րդ:**

**Անցյալ տարի համանուն ցանկում առաջին տեղն զբաղեցնում էր Բարաք Օբաման, երկրորդում Անգելա Մերկելն էր, երրորդում՝ Վլադիմիր Պուտինը: 2011 թվականին Պուտինը 2-րդ տեղում էր եւ զիջում էր միայն Օբամային:**

# 2013-ին ԱՄՆ-ի բյուջեի պակասորդը ամենափոքրն է վերջին 5 տարում

**Սեպտեմբերի 30-ին ԱՄՆ-ում ավարտված 2013 թ. ֆինանսական տարվա բյուջեի պակասորդը կրճատվել-հասել է 680 մլրդ դոլարի: Այդ մասին հաղորդվում է երկրի ֆինանսների նախարարության հրապարակած նյութերում:**

**CNN հեռուստաընկերության Money ծրագրի հաղորդման համաձայն, ԱՄՆ-ի բյուջեի ներկայիս պակասորդը նվազագույնն է վերջին 5 տարում: 2009 թվականի համեմատությամբ, երբ բյուջեի պակասորդը ռեկորդային 1,4 տրիլիոն դոլար էր, ներկայիս պակասորդը կրճատվել է 51 տոկոսով:**

**Բլումբերգ գործակալությունը հիշեցնում է, որ 2009 թվականին ԱՄՆ-ի բյուջեի պակասորդը կազմում էր երկրի ՆՀԱ 10,1 տոկոսը: Ներկայումս պակասորդը նվազել-հասել է երկրի ՀՆԱ 4,1 տոկոսին:**

**Պակասորդի կրճատումը տեղի է ունեցել բյուջեի եկամուտների աճի շնորհիվ, որոնք հասել են 2,774 տրիլիոն դոլարի: 2012 թ. ֆինանսական տարվա համեմատությամբ աճը կազմել է ավելի քան 13 տոկոս: Միեւնույն ժամանակ բյուջետային ծախսերը նվազել են 2,4 տոկոսով եւ հասել 3,454 տրիլիոն դոլարի:**

# Սիրիայի քիմիական զենքի ոչնչացման առաջին փուլն ավարտված է

**Քիմիական զենքի արգելման կազմակերպության տվյալներով, Սիրիան ոչնչացրել կամ շարքից հանել է երկրում քիմիական զենքի արտադրության բոլոր ենթակառույցները:**

**Կազմակերպության փորձագետների խումբն այցելել է քիմիական զենք արտադրած 23 կետերից 21-ը: Մնացյալ երկուսը համարվում են տեսչական ստուգման համար վտանգավոր, սակայն դրանց բոլոր սարքավորումները տարվել են ուրիշ գործարաններ եւ ներկայացվել տեսուչներին, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Սիրիայի քիմիական զենքի ոչնչացման հաջորդ փուլը պետք է սկսվի նախքան նոյեմբերի 15-ը: Մինչ այդ երկրի իշխանությունները պետք է կազմակերպությանը ներկայացնեն քիմիական զենքի բոլոր պաշարների ոչնչացման մանրամասն ծրագիր: Այնտեղ պետք է նկարագրվի, թե ինչպես եւ կոնկրետ որտեղ կոչնչացվեն ավելի քան հազար մետրական տոննա կազմող թունավոր գազերն ու ռազմամթերքը:**

**Հաագայում գործող Քիմիական զենքի արգելման կազմակերպության 19 փորձագետները եւ ՄԱԿ-ի 14 աշխատակիցները Սիրիայում են հոկտեմբերի 1-ից:**

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

# Ծամբարակի մշակութային կենտրոնի վերանորոգումն ավարտված է



**Ճամբարակում կայացել է վերանորոգված Բորյան եղբայրների անվան թանգարանի եւ մշակութային կենտրոնի բացումը, որին ներկա էին «Քրոնիմես» բարեգործական հիմնադրամի եւ Վորլդ Վիժն Հայաստանի ներկայացուցիչները, Ճամբարակի քաղաքապետը եւ բնակիչները:**

**Հիմնադրամի մամուլի ծառայության հաղորդմամբ, «Ճամբարակի թանգարան եւ մշակութային կենտրոն» ծրագիրը մեկնարկել է 2013 մայիսի 15-ին՝ «Քրոնիմես» բարեգործական հիմնադրամի եւ Վորլդ Վիժն Հայաստանի միջեւ համագործակցության շրջանակում: Այն նպատակ ունի վերականգնել Ճամբարակի թանգարանը եւ գրադարանը՝ վերածելով այն համայնքային եւ մշակութային կենտրոնի, ինչպես նաեւ հիմնել արհեստների եւ արվեստների խմբակներ (գորգագործության եւ փայտամշակման) երեխաների եւ դեռահասների համար:**

**Ճամբարակ քաղաքի մշակութային կենտրոնը եւ Բորյան եղբայրների անվան թանգարանը, որը կառուցվել է 70-ականներին, վաղուց գտնվում էին խարխլված վիճակում: Թանգարանի վերականգնումը կօգնի պահպանել մշակութային ժառանգությունը եւ համայնքի երեխաների համար կրթության եւ ժամանցի հնարավորություն կստեղծի: Ճամբարակի եւ հարակից գյուղերի 1500 երեխաների համար այն նաեւ հնարավորություն կընձեռի անհրաժեշտ հմտություններ ձեռք բերել՝ հետագայում աշխատանք գտնելու համար:**

**Նախագծի ընդհանուր բյուջեն կազմել է 22,287,600 դրամ, որից 12,300,000 դրամը տրամադրել է «Քրոնիմես» բարեգործական հիմնադրամը, իսկ 9,987,600 դրամը՝ Վորլդ Վիժն Հայաստանը:**

**«Քրոնիմես» բարեգործական հիմնադրամը ստեղծվել է 2011թ.-ի հունիսին, որի հիմնադիրն է «Քրոնիմես Մայնինգ» ԲԸ գերմանական ընկերությունը:**

# Բրիտանիայի ներկայությունը Հայաստանում՝ լուսանկարների մրցույթ



Սիրում եք լուսանկարել... Ուզում եք շահել մրցանակ Բրիտանիայից...

Երեւանում Բրիտանական դեսպանատունը «Հայաստանում բրիտանական օրեր» ծրագրի շրջանակում հայտարարել է լուսանկարների մրցույթ:

Մրցույթին մասնակցելով եւ հաղթելով կարժանանաք մրցանակի, որն անմիջապես հաղթողին կհասնի Լոնդոնից:

Մրցույթի նպատակն է պատկերել Բրիտանիայի ներկայությունը Հայաստանում: Իսկ մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է գտնել որեւէ վայր, առարկա կամ Բրիտանիայի հետ կապ ունեցող սիմվոլ եւ լուսանկարել այն, ապա լուսանկարին տալ նկարագիր եւ ուղարկել լուսանկարը եւ նկարագիրը Ֆեյսբուքի նամակի միջոցով՝ British Embassy, Yerevan:

Մրցույթի ավարտից հետո նկարները կտեղադրվեն Ֆեյսբուքի էջում: Որից հետո ընտրող հանձնաժողովը կառանձնացնի լավագույն գործը: Ի դեպ, էջում «լայքերի» միջոցով կընտրվի նաեւ հանդիսատեսի համակրանք աշխատանքը, որը նույնպես կստանա մրցանակ: Ընտրության չափանիշները հետեւյալն են՝ ստեղծարար մոտեցում, խոսուն լուսանկար, իմաստալից նկարագիր:

Ժյուրին ուշադրություն է դարձնելու ինչպես լուսանկարին, այնպես էլ նկարագրին: Մրցույթի վերջնաժամկետն է նոյեմբերի 8-ը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Մասաչուսեթս. Արտյոմ Գեղամյանը Կարր կենտրոնի գիտխորհրդի անդամ

**Արտյոմ Գեղամյանը նշանակվել է «Մարդու իրավունքների քաղաքականության Կարր կենտրոնի» 2013-2014 տարեշրջանի գիտական խորհրդի անդամ, տեղեկացնում է «Արմինյն Միրոր Սփեքթեյթր» շաբաթաթերթը: Կարր կենտրոնը Հարվարդ Քենեդի կառավարման կրթօջախի բաժանմունքներից է:**

**Գեղամյանը զբաղվում է Արեւելյան Եվրոպայի եւ նախկին Խորհրդային Միության հանրապետությունների անցումային շրջանի արդարադատության խնդիրներով: Պաշտոնավարել է Հայաստանում, Ֆինլանդիայում, Շվեդիայում, Սլովակիայում, Մալթայում եւ Ստրասբուրգում: Ունի մարդու իրավունքների թեմայով գրված մի շարք աշխատություններ:**

Հ. Ծ.

# Անկեղծ հիացմունք

## *Հակոբ Գույումճյանի սաժունի երեկոն Թեհրանում*

Մշակութային անսովոր ավարտին, ԻԱՄՄ-ի հարկի տակ բախտ ունեցա մասնակցելու լիբանանահայ վաստակավոր սամունֆող Հակոբ Գույումճյանի սամունի երեկոյին: Այո՛, չեք սխալվում, սամունի երեկոյին, առանց երաժշտական ձեւավորման, առանց պարախմբերի ու երգչախմբերի համակցման, առանց բարձրադիր բեմահարթակի եւ անգամ առանց բարձրախոսի, երկուժամյա, «մերկ» սամունի երեկոյին: Թերեւս իմ կյանքում ամենահրաշք երեւույթներից մեկին, ուր սամունքողը երկար ժամերը պարզապես տարալուծեց իր հզոր էներգիայի հորձանուտում եւ հեղեղեց դրանով ողջ դահլիճն ու ունկնդիրներից յուրաքանչյուրին, որոնցից ոմանք, կանխավ, ձանձրույթի ու թերեւս դահլիճը շուտափույթ լքելու տրամադրվածությամբ էին ներկայացել: Մեծ վարպետը իր հնչեղ ու հոգեթով ձայնով, պարզ ու մաքուր առոգանությամբ, հրաշալի ու ազդեցիկ բեմական կեցվածքով, ինչած ամեն գործի խոր ըմբռնմամբ, անկեղծ վերապրումով ու վերարտադրմամբ հմայեց ու տիրեց բոլորին:

Հակոբ Գույումճյանը ոչ միայն սամունքում, այլեւ համառոտ ներկայացնում ու վերլուծում էր իր գործերի ընտրության, դրանց ներկայացման եւ իրար շղթայակցման տրամաբանությունը, որը անզուգական էր իր որակով եւ ինքնատիպ խորաթափանցությամբ:

Մասնագիտությամբ նաեւ ճարտարապետ սամունքողը, նրբանկատ ու բծախնդիր համադրությամբ, հայ պոեզիայի գոհարների հետաքրքրական հաջորդականությամբ մի նոր եւ կուռ ամբողջականություն ու տրամաբանություն էր հաղորդել բազում անզամներ լսված ստեղծագործություններին: Այսպիսով առավել շեշտված ու հզոր էր դառնում դրանց հնչողությունն ու գաղափարը: Հնարամիտ ու ոգեշնչող էր սերը, հայրենիքի ու կյանքի անզուսպ տարփանքին ձոնվածքների ծաղկաքաղը՝ Չարենց-Սիլվա Կապուտիկյան-Սայաթ Նովա տրավորիչ համակցումով: Այնուհետեւ Համո Սահյանի շողշողուն «մանյակների շարանը» եւ Վահան Թեքեյանի քաղցրահունչ արեւմտահայերեն հոյակապ բանաստեղծությունները բացեցին մեր առջեւ մարդ արարածի հոգու, մտքի ու զգացմունքների կատարյալ, պարզ ու հարազատ պատկերը: Ահա այսպիսի ներշնչված, էլեկտրականացած ու պատրաստված մտքով ունկնդիրը առաջնորդվեց դեպի երեկոյի հաջորդ փուլին, ուր խտացված էր թերեւս վարպետի բուն ասելիքն ու պատգամը: Այստեղ հնչեց տիեզերական, փիլիսոփայական աշխարհըմբռնումի, համամարդկային սիրո ու նվիրումի հզոր մունետիկի՝ Պարույր Սեւակի հանրահայտ «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին ու ճշգրիտ սարքերին» անմահ բանաստեղծությունը: Այս բարդ ու պարտավորեցնող խոհերով պարոն Գույումճյանը մեզ առաջնորդեց դեպի հավերժախոս գերեզմանները՝ մեր նահատակ, անմեղ զոհերի եւ ստիպեց միասնաբար վերապրել մեր ժողովրդի ու դարի մեծագույն դժբախտությունը՝ Վահագն Դավթյանի «Ռեքվիեմ»-ի սարսափազդու գամմաների տակ:

Երեկոն ավարտվեց Գեւորգ Էմինի գոտեպնդող ու հուսադրող «Սասունցիների պարը» փայլուն ստեղծագործությամբ:

Երեկոն մի անմոռանալի հրաշք հանդիպում էր մեր գրականության հսկաների հետ, որոնք վերակենդանացել էին Հակոբ Գույումճյանի կախարդիչ կերպարում: Սա, իրոք, մի հրաշք, մի կենարար շունչ, մի անմահական հյութ էր այսօրվա դժվարին եւ օրավուր դժգունացող ու գորշ իրականությունում: Հուսով եմ, որ այս մեծ տաղանդը պետք է ավելի լիարժեքորեն ու արժանավույնս հասցնել մեր ժողովրդի լայն խավերին՝ ամենուր ու ամենքին: Հատկապես պետք է նկատի ունենալ այն պարագան, որ այս ազգանվեր ու շնորհալի արտիստը իր արվեստը բաշխում է մեծահոգի նվիրումով ու այսօրվա համար բացառիկ ու անհավատալի համեստությամբ ու անշահախնդրությամբ:

Այս փոքրիկ հոդվածով իմ հիացմունքը, սերը ու շնորհակալությունն եմ հայտնում շնորհաշատ ու վաստակաշատ Հակոբ Գույումճյանին: Մաղթում եմ նրան բեղուն, շարունակական գործունեություն, հնարավորինս երկար, որն իր հետեւից, անշուշտ, կյանքի կկոչի բազում սիրահար հետեւորդների. նոր արժանավայել բարձունքում պահելով սամունի մեծագույն արվեստը եւ դրան սնող ու ներշնչող մեր հայ հարուստ գրականությունը:

ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

# Բացառիկ հրատարակություն

«Հայագիտակ» հրատարակչությունը, որ գրքի միջազգային շուկայում հայտնի է քարեկազմ հուշանվերային հրատարակություններով, ինչպես նաեւ «Գիր». դասական ժառանգություն» մատենաշարով, օրերս հրապարակ հանեց մի բացառիկ ժողովածու՝ Սայաթ-Նովայի «Հայերեն խաղեր»-ը թեհրանաբնակ ճարտարագետ Վարդգես Զարգարյանի աշխատասիրությամբ: «Հայագիտակը» ընթերցողին քաջ հայտնի «Սեւ գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների եւ Հայոց ցեղասպանության մասին» մեծարժեք գիրքը հայերեն, ռուսերեն, թուրքերեն հրատարակելուն զուգահեռ, լույս ընծայեց մեծ գուսանի 68 խաղերի ժողովածուն՝ պարսկերեն, ինչպես նաեւ թուրքերեն, վրացերեն, արաբերեն բառերի նոր, հիմնավոր մեկնաբանությամբ:

Գրքի շնորհանդեսը, որ տեղի ունեցավ Ճարտարապետի տանը, բացեց «Հայագիտակ» հրատարակչության տնօրեն, գրքի պատասխանատու խմբագիր եւ հավելվածների կազմող Ալբերտ Իսոյանը: «Այսօր, ինչպես գիտեք,- ասաց նա,- Սայաթ-Նովայի ծննդյան օրն է. տարվա բոլոր օրերին մենք մտապես հիշում ենք նրան, հաղորդակցվում նրա բարձր արվեստին, ուստի յուրաքանչյուր օր ասես նորից է ծնվում, վերածնվում մեծ բանաստեղծն ու երգասացը. ասել է թե՝ նա չունի մահվան օր, Սայաթ-Նովան անմահ է»: Այնուհետեւ Ա. Իսոյանը անդրադարձավ Վարդգես Զարգարյանի կատարած բծախնդիր, բարեխիղճ, հսկայածավալ աշխատանքին, որի շնորհիվ հանրահայտ խաղերի մեջ տեղ գտած բազմաթիվ օտար բառեր եւ բառակապակցություններ ստուգաբանվում են նորովի եւ համոզիչ:

Գրքի շապիկը զարդարում է Երվանդ Քոչարի՝ ընթերցողին անծանոթ դիմաքանդակը, որը պահվում է մեծ արվեստագետի տուն-թանգարանում: Նշվեց, որ «Հայագիտակը» դիմելու է քաղաքապետարան այդ դիմաքանդակը Երեւանում տեղադրելու առաջարկով:

Աշխատասիրողի կատարած աշխատանքի, ինչպես նաեւ գրքի հրատարակչական, խմբագրական արժանիքների մասին խոսեցին բանասիրության դոկտոր, սայաթնովագետ Հենրիկ Բախչինյանը, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, գրքի առաջաբանի հեղինակ Սամվել Մուրադյանը, Իրանում Հայաստանի դեսպան Գրիգոր Առաքելյանը, մշակութաբան Ռոբերտ Միրզոյանը:

Աշխատասիրողը իր շնորհակալական խոսքում առանձնահատուկ նշեց գրքի խմբագիր Ալբերտ ԻՍՈՅԱՆԻ, ինչպես նաեւ հրատարակչության աշխատակիցներ Վահագն Իսոյանի, Ալիսա Ալեքսանյանի եւ «Հայրապետ» տպարանի տնօրեն Սարգիս Թումանյանի կատարած ներդրումը գրքի հրատարակության գործում:

Շնորհանդեսը ուղեկցվում էր հայ երգիչներ եւ երաժիշտներ Գրիգոր Սաֆարյանի, Ռաֆայել Վարդանյանի, Արմեն Դանիելյանի, Ալեքսանդր Պողոսյանի կատարումներով:

Շնորհանդեսին մեծ շուք հաղորդեց հանրահայտ դաշնակահար, կոմպոզիտոր, հանրապետության վաստակավոր արտիստ Հայկ Մելիքյանի եւ ռուս երգչուհի, միջազգային մրցույթների դափնեկիր, 2013 թվի Բեռլինի Կոմիտասի անվան երաժշտական մրցույթի առաջին մրցանակակիր Մարիա Կալեսիդիսի մասնակցությունը:

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

# Մարզական

## Վարդան Մինասյանն առաջարկներ ունի եվրոպական եւ ասիական թիմերից

ՀՖՖ գործկոմի նիստում Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը, որի պայմանագրի ժամկետը լրացավ հոկտեմբերի 30-ին, ներկայացրել է կատարած աշխատանքների հաշվետվությունը: ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանն իր եւ գործկոմի անդամների անունից շնորհակալություն է հայտնել Վարդան Մինասյանին հավաքականում կատարած աշխատանքի համար: Վերջինս էլ իր հերթին շնորհակալություն է հայտնել ՀՖՖ նախագահին եւ



գործկոմի անդամներին իր հանդեպ ցուցաբերած բարձր վստահության համար:

Այսօր շատերին է հետաքրքրում, թե որտե՞ղ է շարունակելու մարզչական գործունեությունը Վարդան Մինասյանը: Վերջինս «Սպորտ-Էքսպրեսի» թղթակցին հետեւյալն է ասել. «Առաջարկներ կան ՌԴ պրեմիեր եւ առաջին լիգաների մի քանի ակումբներից, ինչպես նաեւ եվրոպական ու ասիական թիմերից: Սակայն դրանք դեռեւս խոսակցություններ են: Իմ գործերով զբաղվում է գործակալս, որը հավաքում է ողջ տեղեկատվությունը: Չգիտեմ, թե իրավիճակը երբ պարզ կդառնա»:

Եվ այսպես, Վարդան Մինասյանն ավարտեց իր մարզչական գործունեությունը Հայաստանի ազգային հավաքականում: Հայաստանի ազգային հավաքականը մինչ օրս գլխավորած 14 մարզիչներից ամենաերիտասարդը՝ 39-ամյա Վարդան Մինասյանը բոլորից երկար՝ գրեթե 5 տարի աշխատեց մեր ընտրանիում: Նրա օրոք մեր հավաքականն իրոք առաջընթաց է ապրել՝ զգալիորեն բարելավելով իր խաղային որակները, ցուցադրելով բավական գրագետ ու արդյունավետ խաղ: Հայաստանի ազգային հավաքականը լուրջ մրցակից է դարձել աշխարհի ցանկացած հավաքականի համար: Դրա վառ ապացույցը ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում մեր հավաքականի զբաղեցրած բարձր դիրքն է՝ 38-րդ հորիզոնականը:

2007թ. Իան Պորտերֆիլդի մահից հետո, երբ վերջինիս օգնական Թոմ Ջոնսն էլ արդեն հեռացել էր Հայաստանից, Վարդան Մինասյանն առաջին անգամ հավաքականի գլխավոր մարզչի պարտականությունները կատարեց: Նոյեմբերի 17-ին Պորտուգալիայի ընտրանու հետ Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի արտագնա խաղում մեր ֆուտբոլիստները Մինասյանի գլխավորությամբ պարտվեցին 0:1 հաշվով: 4 օր անց մեր հավաքականը Երեւանում ընտրական մրցաշարի ավարտական խաղում նույնպիսի հաշվով զիջեց ղազախներին:

Ազգային հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնը Վարդան Մինասյանը պաշտոնապես ստանձնեց Յան Պոուլսենի պաշտոնանկությունից հետո՝ 2009թ. ապրիլի 1-ին: Այդ օրը նրա գլխավորությամբ մեր ընտրանին Տալլինում էստոնացիների հետ կայացած աշխարհի առաջնության ընտրական մրցախաղում 0:1 հաշվով պարտվեց մրցակցին: Իսկ առաջին հաղթանակը երիտասարդ մարզչի օրոք ՀՀ հավաքականը տոնեց 2009թ. սեպտեմբերի 9-ին Երեւանում բելգիացիների հետ կայացած աշխարհի առաջնության ընտրական մրցախաղում՝ 2:1:

Իտալիայի հավաքականի հետ հանդիպումը Վարդան Մինասյանի գլխավորությամբ մեր հավաքականի անցկացրած 41-րդ խաղն էր: Այդ հանդիպումներից 14-ն ավարտվել է մեր հավաքականի հաղթանակով, 4-ում գրանցվել է ոչ-ոքի, 23-ում մեր ֆուտբոլիստները պարտվել են: Հայաստանի հավաքականը խփել է 56 գնդակ, բաց է թողել 60 գոլ:

Վարդան Մինասյանի օրոք մեր ֆուտբոլիստներն առավել հաջող են հանդես եկել ընտրական մրցախաղերում՝ վաստակելով հնարավոր միավորների 40,7 տոկոսը (27 պադ, +10=3-14, 37-33), աչքի ընկնելով արդյունավետ խաղով, ունենալով խփած եւ բաց թողած գնդակների դրական տարբերություն: 2012թ. Եվրոպայի եւ 2014թ. աշխարհի առաջնությունների ընտրական մրցաշարերում Մինասյանի օրոք ցույց տված արդյունքները լավագույնն են հավաքականը գլխավորած մարզիչների մեջ:

Իսկ ահա ընկերական մրցախաղերում Վարդան Մինասյանի արդյունքը ցածր է: Նրա գլխավորությամբ անցկացրած ընկերական 14 հանդիպումներից միայն 4-ում է հավաքականը հաղթել՝ վաստակելով հնարավոր միավորների 30,9 տոկոսը:

## Ռոնալդուն շրջանցեց Ֆերենց Պուշկաշին

Իսպանիայի ֆուտբոլի առաջնության 11-րդ տուրում 3 անգամ գրավելով «Սեւիլիայի» դարպասը, Քրիշտիանու Ռոնալդուն իսպանական պրիմերայում խփած գոլերի քանակը հասցրեց 158-ի եւ շրջանցեց Մադրիդի «Ռեալի» լեգենդներից մեկին՝ հունգարացի անվանի ռմբարկու Ֆերենց Պուշկաշին: Վերջինս 1958-1966-ին հանդես գալով արքայական ակումբի կազմում, Իսպանիայի առաջնություններում աչքի էր ընկել 156 անգամ:

Ներկայումս Քրիշտիանու Ռոնալդուն «Ռեալի» բոլոր տարիների լավագույն ռմբարկուների հնգյակն է եզրափակում: Ցուցակը գլխավորում է Ռաուլը, որը 228 գոլ է խփել: 2-րդ արդյունքն ունի ակումբի մեկ այլ լեգենդար ֆուտբոլիստ՝ Ալֆրեդո դի Ստեֆանոն, որը 216 գոլ է խփել: Լավագույն եռյակը եզրափակում է Սանտիլյանան՝ 186 գոլ, որին հաջորդում է Հուգո Սանչեսը՝ 164:



### ՖՈՒՏԲՈԼԻ ՌԴ ԳԱՎԱԹ

## Մարկոս Պիզելին աչքի ընկավ արդյունավետությամբ

**Ֆուտբոլի Ռուսաստանի գավաթի 1/16 եզրափակիչ խաղում բրազիլացի Մարկոս Պիզելին վերջապես խաղադաշտ դուրս եկավ «Կրասնոդարի» մեկնարկային կազմում ու մեծ ներդրում ունեցավ «Դոլգոպրուդնիի» նկատմամբ հյուրընկալվելիս տոնած 1-0 հաշվով հաղթեց «Շիննիկին»: Այդ հանդիպմանը «Սպարտակի» կազմում մասնակցեց միայն Արաս Օզբիլիսը, իսկ ահա Յուրա Մովսիսյանը վնասվածքի պատճառով Յարոսլավլ չէր մեկնել: Նա մարզումների ժամանակ վնասել է ոտնաթաթը ու հնարա-**



**հաղթանակում (4-1): Հանդիպման 17-րդ րոպեին Մարկոսը տուգանային հարվածով կրկնապատկեց հաշիվը, իսկ խաղավերջում խփեց 4-րդ գնդակը: Գուցե Մարկոսի արդյունավետ խաղը ստիպի «Կրասնոդարի» մարզիչներին վերականգնելու վստահությունը ՀՀ հավաքականի կիսապաշտպանի նկատմամբ ու նրան հաջորդ հանդիպումներում ավելի մեծ խաղաժամանակ հատկացնեն:**

**Գավաթի մրցաշարում պայքարը կշարունակի նաեւ Մոսկվայի «Սպարտակը», որը Յարոսլավլում վոր է, որ հաջորդ հանդիպումն էլ բաց թողնի:**

**Եկատերինբուրգի «Ուրալն» առանց Արթուր Սարկիսովի եւ Էդգար Մանուչարյանի 11 մ հարվածներով 3-5 հաշվով պարտվելով «Տոսնոյին» (հիմնական եւ լրացուցիչ ժամանակում դարպասները մնացել էին անառիկ), դուրս մնաց մրցաշարից: Պրեմիեր լիգայի մի քանի ակումբներ՝ «Զենիթը», Մոսկվայի «Դինամոն» ու «Լոկոմոտիվը», «Ռուբինը», «Վոլգան», «Ամկարը» եւս դուրս մնացին ՌԴ գավաթի խաղարկությունից:**

## Վանաձորցի հանդբոլիստներն ուժեղագույնն են

**Ալավերդիում անցկացվեց հանդբոլի պատանեկան մրցաշար, որը նվիրված էր հայկական հանդբոլի երախտավոր Օլեգ Գորբունովի հիշատակին: Մրցումներն անցկացվեցին նրա անվան համալիր մարզադպրոցի դահլիճում: Մրցասպարեզ դուրս եկած 4 թիմերի մրցավեճում հաջողությունն ուղեկցեց Վանաձորի հավաքականին: Վանաձորցիները մրցումների առաջին օրը 25-19 հաշվով հաղթեցին Ալավերդու 1-ին հավաքականին, ապա պարտության մատնեցին Աջափնյակի թիմին (26-15): Ալավերդու 2-րդ հավաքականն էլ չկարողացավ լրջորեն դիմակայել վանաձորցիներին՝ պարտվելով 18-26 հաշվով: 2-րդ տեղը գրավեց Ալավերդու 1-ին հավաքականը, որը պարտության մատնեց իր համաքաղաքացիներին (29-18) եւ Աջափնյակի թիմին (28-22): Հաջորդ տեղերը գրավեցին Աջափնյակի եւ Ալավերդու 2-րդ հավաքականները:**

**Մրցումների արդյունքներն ամփոփվեցին մրցաշարի փակման արարողության ժամանակ, որին ներկա էր նաեւ Ալավերդու քաղաքապետ Արտավազդ Վարոսյանը: Նա պարգեւներ հանձնեց մրցանակակիրներին, մրցաշարի լավագույն հանդբոլիստ ճանաչված Ալավերդու 1-ին հավաքականի խաղացող Արթուր Պապոյանին:**

## Հայ ձյուդոյիստները ձախողվեցին

**Սլովենիայի Լյուբլիանա քաղաքում անցկացված ձյուդոյի երիտասարդների աշխարհի առաջնությանը մասնակցած հայ 6 ձյուդոյիստներից եւ ոչ մեկին չհաջողվեց մրցանակակիր դառնալ: Մինչեւ մրցումների մեկնելը հավաքականը Մարտին Սարգսյանի գլխավորությամբ ուսումնամարզական հավաք էր անցկացրել Աբովյանում:**

**Մեր ձյուդոյիստներից 4-ին հաջողվեց միայն 2 փուլի արգելքները հաղթահարել: Սլովենիայում 2-ական հաղթանակ տարան ու մեկ պարտություն կրեցին Նարեկ Կարապետյանը (60 կգ), Արսեն Ղազարյանը (66 կգ) եւ Դավիթ Նիկողոսյանը (73 կգ): Մինչեւ 55 կգ քաշային Գարիկ Հարությունյանն առաջին փուլում ազատ էր եւ միայն մեկ հաղթանակ տոնելով, հաջորդ փուլում պարտվեց ու դուրս մնաց հետագա պայքարից: Իսկ ահա Դավիթ Ղազարյանը (66 կգ) եւ Արտավազդ Հովսեփյանը (73 կգ) պայքարից դուրս մնացին առաջին գոտեմարտերում պարտվելով:**

## Չեմպիոնական գոտին կհանձնվի Լեբեդեւին

**Պրոֆեսիոնալ բռնցքամարտի համաշխարհային ընկերակցությունը (WBA) պանամացի Գիլերմո Ջոնսին զրկել է ծանրքաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսից: Նա մեղադրվում է արգելված խթանիչներ օգտագործելու մեջ: Ուստի չեմպիոնական գոտին պետք է հանձնվի ռուսաստանցի Դենիս Լեբեդեւին, որը մայիսին Մոսկվայում 11-րդ ռաունդում նոկաուտի էր ենթարկվել Ջոնսի հետ մենամարտում:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Կեպլեր-78b երկրանման մոլորակի հայտնաբերմանը մասնակցել է երիտասարդ հայ աստղագետը

**Կեպլեր-78b-ն արտարեգակնային մոլորակ (էկզամոլորակ) է, որը պտտվում է Կարապի համաստեղությունում գտնվող արեգակնանման աստղի ուղեծրում, Երկրից շուրջ 400 լուսատարի հեռավորության վրա: Մինչ այժմ աստղագետները որոշել են ավելի քան 1000 էկզամոլորակների բնութագրերը, սակայն Կեպլեր-78b-ն առանձնահատուկ է: Համաձայն հեղինակավոր «Nature» ամսագրում հրապարակված ուսումնասիրության, այն ունի Երկրին շատ նման զանգված եւ խտություն: Աշխատանքի հեղինակները՝ Ժնեւի համալսարանի պրոֆեսոր Ֆրանչեսկո Պեպեի ղեկավարությամբ Շվեյցարիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի եւ ԱՄՆ-ի տարբեր գիտական հաստատությունները ներկայացնող աստղագետների միջազգային խմբի անդամներ, ցույց են տվել, որ Կեպլեր-78b-ն բաղկացած է քարից եւ երկաթից՝ հենց մեր Երկրի նման: Այսպիսով, Կեպլեր-78b-ն ճշգրիտ հայտնի զանգվածով ու շառավղով առայժմ ամենափոքր էկզամոլորակն է:**



**Կեպլեր-78b-ն սկզբում գրանցվել է ՆԱՍԱ-ի «Կեպլեր» արբանյակի կողմից: «Կեպլերը» հայտնաբերել է առջեւով անցնող մոլորակի հետեւանքով մայր աստղի պայծառության չնչին փոփոխություն: Այդ հայտնաբերումից որոշ ժամանակ անց Լա Պալմայում (Կանարյան կղզիներ) գտնվող 3,58 մ հայելու տրամագծով իտալական Գալիլեյի անվան ազգային դիտակը (Telescopio Nazionale Galileo-TNG) ուղղեցին այդ աստղին. TNG-ի վրա տեղադրված աշխարհի ամենաճշգրիտ սպեկտրոգրաֆներից մեկի՝ HARPS-N-ի (High Accuracy Radial Velocity Planet Searcher-North) գիտական խումբը որոշել էր իր դիտումները կենտրոնացնել Կեպլեր-78b-ի վրա: Չափազանց ինտենսիվ դիտողական ծրագիրը գարնան եւ ամռան ամիսներին տվեց իր պտուղները: Օգտագործելով HARPS-N-ի եզակի բնութագրերը եւ ճշգրտությունը, հետազոտական խումբը չափեց էկզամոլորակի պտույտի հետեւանքով առաջացած մայր աստղի աննշան տատանումները: Ցույց տվեց, որ մոլորակն ունի երկրանման զանգված եւ խտություն:**

**Երիտասարդ հայ աստղագետ Ավետ Հարությունյանն աշխատում է TNG-ում եւ այս ուսումնասիրության համահեղինակներից մեկն է: «Ակնհայտ էր, որ մենք պետք է բացահայտեինք փոքր մոլորակով պայմանավորված չափազանց թույլ տատանում: TNG-ի HARPS-N-ը հյուսիսային կիսագնդի ամենաճշգրիտ սպեկտրոգրաֆն է, ուստի ուրիշ ինչ սարք կարող էր լուծել այս խնդիրը, եթե ոչ մերը»,- բացատրում է Հարությունյանը: Այնուհետեւ ավելացնում է. «Ներկայումս սրանք ամենաճշգրիտ արդյունքներն են, որ կարելի էր ձեռք բերել, եւ մենք ուրախ ենք տեսնել, թե ինչպես են մեր սարքավորումները իրենց արդարացնում այս խրթին դիտումների ընթացքում»:**

**Կեպլեր-78b-ն ունի ընդամենը 1.17 երկրային շառավիղ, մինչդեռ զանգվածը հավասար է 1,86 երկրային զանգվածի: Ստացվում է, որ նրա խտությունն է 5,57 գրամ խորանարդ սանտիմետրում, եւ ենթադրվում է, որ բաղկացած է քարից ու երկաթից, այսպիսով՝ դառնալով մինչ օրս հայտնի Երկրին առավել նման էկզամոլորակը: Սակայն, Կեպլեր-78b-ն ունի շատ կարճ՝ ընդամենը 8,5 ժամ ուղեծրային պարբերություն, եւ հետեւաբար, այն ուղեծրում է իր մայր աստղից մոտ հեռավորության վրա: Նշանակում է, մոլորակի մակերեւույթի ջերմաստիճանը պետք է լինի 3000-5000 աստիճանի սահմաններում, ակնհայտորեն բացառելով կյանքի որեւէ հնարավորություն, ինչպես մենք դա կպատկերացնեինք:**

**Կեպլեր-78b-ին վիճակված է կործանվել, քանի որ մակընթացային ուժերը շարունակաբար նրան դեպի իր աստղը կմղեն: Ի վերջո, նա այնքան կմոտենա, որ աստղի ձգողության դաշտը կմասնատի մոլորակը: Ինչպես կանխատեսում են տեսաբանները, սա կարող է տեղի ունենալ երեք միլիարդ տարվա ընթացքում: «Մեր Արեգակնային համակարգը կարող էր Կեպլեր-78b-ի նման մոլորակ ունենալ: Սակայն մոլորակը ոչնչացված կլիներ համակարգի էվոլյուցիայի վաղ փուլերում, չթողնելով ոչ մի նշան»,- ասում է Ավետ Հարությունյանը:**

**Նույնիսկ առանց կյանք ունենալու հնարավորության, Կեպլեր-78b-ի՝ երկրանման չափերի, խտության եւ քիմիական բաղադրության մոլորակի բացահայտումը եւ բնութագրերի որոշումը մեծ քայլ է արտերկրային կյանքի մեր որոնումներում: HARPS-N-ը դեռեւս էլ ավելի ապշեցուցիչ արդյունքներ կտա՝ մեզ հնարավորություն տալով էլ ավելի լիարժեք պատկերացում կազմել էկզամոլորակների առաջացման եւ էվոլյուցիայի մասին, եւ հնարավոր է, որ մի օր էլ գտնենք երկրանման հատկանիշներով բնակեցված մոլորակ:**


ВТБ

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն հայտարարում է բաց մրցույթ տրանսպորտային ծառայությունների մատուցման համար «Տաքսի ծառայության» կազմակերպություն ընտրելու նպատակով:**

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Խորենացի 15/1 հասցեով:

Մրցութային հայտերն ընդունվում են մինչեւ 2013թ. նոյեմբերի 11-ը, ժամը 17:00 ներառյալ:

Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա 2013 թ. նոյեմբերի 11-ին , ժամը 17:30-ին:

Մրցույթին մասնակցելու պայմանները կարելի է գտնել www.vtb.am կայքի «Մրցույթներ» բաժնում:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել `ՎՏԲ-Հայաստան բանկ' ՓԲԸ Մրցութային կոմիտե: հասցե՝ՀՀ, ք. Երեւան, 0010, Խորենացի 15/1:

***Կոնտակտային անձ՝***
*Լուսինե Սուսանյան*
Հեռ. +(37410) 51-37-49, ներքին՝ 8 3302
Էլ. փոստ՝ l.susanyan@vtb.am
*Հեղինե Մելքումյան*
Հեռ. (+37410) 51-37-49, ներքին՝ 8 3112
Էլ. փոստ՝ h.a.melkumyan@vtb.am


# Ստորագրահավաք-կոչ...

*1-ին էջից*

**Ըստ նույն հաղորդագրության՝ Հայ դատի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը կալիֆոռնիաբնակ հայերի անունից շնորհակալություն է հայտնել կոնգրեսականներ Շիֆին եւ Վալադաոյին՝ ստորագրահավաք կազմակերպելու իրենց նախաձեռնության եւ այն բանի համար, որ նրանք կոչ են արել իրենց գործընկերներին՝ աջակցելու Սպիտակ տանը Անկարայի ցեղասպանությունը ժխտելու զզվելի քարոզարշավի «կապիտուլյացումից» փրկելու ջանքերին:**

**Արամ Համբարյանը հատուկ շնորհակալություն է հայտնել նաեւ կոնգրեսականներ Փալոնին եւ Շերմանին, որոնք նույնպես առանձին հաղորդագրությամբ դիմել են նախագահ Օբամային՝ վերանայելու Սպիտակ տան դիրքորոշումը հայկական պատմական գորգի ցուցադրությունը խափանելու առնչությամբ:**

**«Դժվար է բառերով արտահայտել այն խոր հիասթափությունը, որ զգում ենք ականատեսը լինելով այն իրողության, որ Մ. Նահանգների նախագահի Կուլիջին հանձնված պատմական եւ մշակութային մի գանձ փակ դռների հետեւում է մնում որոշ պատմական փաստեր հանրային քննարկման առարկա չդարձնելու Թուրքիայի ցանկության պատճառով», գրել է Ֆրենկ Փալոնը: Նա կոչ է արել «պատմական ճշմարտության եւ անաչառության կողմնակիցը լինել» եւ թույլ տալ Սմիթսոնյան ինստիտուտում ցուցադրել հայ որբերի հյուսած գորգը: «Այլապես առանց պատճառաբանության ցուցադրության արգելումը այն տպավորությունն է թողնում, որ հայերի ցեղասպանության հետ կապված իրադարձությունների քննարկումները անցանկալի են»:** Հ. Ծ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

# Ցաբրնոխը, Մնացականյանը...

*1-ին էջից*

Իսկ ընդհանրապես, ըստ Ցաբրնոխի, հարգելով Հայաստանի որոշումը՝ ՄՄ մտնելու վերաբերյալ, Եվրախորհրդարանը Հայաստան-ԵՄ համագործակցության նոր հնարավորություններ է մտմտում այս նոր պայմաններում: Ասուլիսին այդ մասին ասելով՝ միաժամանակ այս բովանդակությամբ ձեւակերպումներ էին արվել ԵՄ-Հայաստան երկու համանախագահների տարածած հայտարարության մեջ, որտեղ վերջիններս վերահաստատել են հանձնառությունը՝ շարունակել ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ համագործակցության հետագա զարգացումը, հիմնված նախորդ տարիներին երկու կառույցների խորհրդարանականների արդյունավետ համագործակցության վրա Հայաստանի եվրոպական օրակարգը առաջ մղելու նպատակով: Քաջալերում կար՝ ուղղված Եվրոպական խորհրդարանին՝ ԵՄ-Հայաստան արտոնագրերի դյուրացման համաձայնագրին կանաչ լույս տալու հետ կապված, նույնը ակնկալելով Հայաստանի Ազգային ժողովից՝ մինչեւ Վիլնյուսի գագաթնաժողովը (Եվրախորհրդարանը վավերացրել է համաձայնագիրը, Հայաստանի խորհրդարանը՝ քննարկել, վավերացումը թողնելով հաջորդ քառօրյային): Համանախագահներն, այնուամենայնիվ, հասկանում են այն դժվարությունները, որոնք այլեւս թույլ չեն տալիս շարունակել ԵՄ-Հայաստան Ասոցիացման համաձայնագրի, ներառյալ՝ ԽՀԱԱԳ գործընթացը, ինչպես նախատեսված էր այս նոյեմբերին՝ Վիլնյուսում: Բայցեւ՝ արժանին մատուցում կատարված աշխատանքի եւ ներդրված ջանքերի համար եւ կոչ են անում շարունակել նույն եռանդով՝ հստակեցնելու, թե ինչպես պետք է առաջ շարժվել Վիլնյուսի գագաթնաժողովից հետո, ասված էր հայտարարության մեջ:

Իսկ ահա Հայաստանի արտաքին գերատեսչությանը բյուջեի հատկացումների քննարկմանը ֆինանսների փոխնախարար **Պավել Սաֆարյանին** ուղղված պատգամավորական հարցումները ենթատեքստեր ունեին. ինչո՞ւ են բյուջեում եվրոինտեգրման ուղղությամբ ծախսելիք գումարները նույնը մնում, երբ Մաքսային միությանը անդամագրվելու հայտարարություն կա (օրինակ՝ 122 մլն դրամ հատկացվելու է օրենսդրական եւ թարգմանչական աշխատանքներին, նույնքան՝ որքան 2013-ին է եղել), կամ եվրոդրամաշնորհների հատկացումների գումարները նույն չափերով արտացոլված են նաեւ նոր բյուջեում՝ երաշխիք կա՞, որ դրանք չեն կասեցվի: Չնայած այս հարցերի հասցեատերը արտգործնախարարությունն էր՝ Պ. Սաֆարյանը եվրոդրամաշնորհների գումարների վերաբերյալ համոզված էր, որ դրանք կգան: Իսկ ահա հարցը երբ վերաուղղվեց փոխարտգործնախարար **Զոհրաբ Մնացականյանին,** նա նշեց, որ, իրոք, հարցադրումը տեղին է, եւ եթե ընթացքում հասկանալի դառնա, որ պետք է ավելի քիչ օրենսդրություն թարգմանվի, այդ ժամանակ կվերանայեն գումարները:

Զ. Մնացականյանը ոչ պատգամավորների, ոչ լրագրողների հարցերից չխուսափեց: Այս մի քանի ամիսների մշտական հարցը՝ Զ. Մնացականյանին, թե Վիլնյուսում վերջապես ի՞նչ ենք ստորագրելու, ունեցավ այս կարգի պատասխան. բանակցվում է եվրոպացի գործընկերների հետ, որ ստորագրվելիք փաստաթղթի ձեւը եւ բովանդակությունը համապատասխան եւ փոխկապակցված լինեն, ձեւակերպվի հարցերի այն շրջանակը, որով ԵՄ-ի հետ Հայաստանը շարունակելու է աշխատել: Իսկ ահա բովանդակությունը կարտահայտվի համապատասխան ձեւում: Մնացականյանն ասում էր, թե նոյեմբերի 28-ից հետո 29 է լինելու, 30-ը՝ եւ կյանքն է շարունակվելու, եւ գործընկերությունը: Այս առավել քան դիվանագիտական պատասխանը, բնականաբար, չհագեցրեց լրագրողներին, բայց ճշտող հարցերն էլ նոր բան չավելացրին այս պատասխանին: Միայն այն, որ ստորագրվելիքը (հուշագիր, թե մի այլ բան) միակ կամ վերջին փաստաթուղթը չի լինելու: Վիլնյուսում ստորագրելիքը պետք է արտացոլի ե՛ւ այս հանգրվանը, ե՛ւ հարաբերությունները հետագայում զարգացնելու նպատակները: Իսկ թե ո՞վ է գնալու Վիլնյուս՝ արդյո՞ք երկրի նախագահը նաեւ, Զ. Մնացականյան նշեց, թե մասնակցությունը հնարավորինս բարձր մակարդակով է լինելու:

Օրերս Հայաստանի առաջին նախագահը խոսել էր Սերժ Սարգսյանի հրաժարականի եւ արտաքին արկածախնդիր քաղաքականության մասին: Այս մասին Զ. Մնացականյանին ուղղված հարցը վերադարձվեց մոտավորապես այսպես. փոխարտգործնախարարն այդպես չի կարծում, իսկ Հայաստանի հեղինակության խնդիր էլ չի տեսնում, քանի որ գործընկերների հետ իրականացվում է երկրի շահերից, անվտանգությունից բխող քաղաքականություն՝ խնդիրների լուծման տարբեր ձեւաչափեր գտնելով: Իսկ գործընկերներն էլ շատ են՝ Եվրամիությունը, նրա անդամ երկրները, Ռուսաստանը եւ այլն:

ՀԱԿ-ից **Արամ Մանուկյանն**, օրինակ, հետաքրքրվեց, թե եթե փոխարտգործնախարարն զգա, որ Մաքսային միություն մտնելու պայմանը Ղարաբաղի հարցն է, ի՞նչ դիրքորոշում կունենա՝ գնահատական տալով նաեւ, թե արտաքին ոլորտում Հայաստանը մերժվածի կամ ձախողվածի վիճակում է: Զ. Մնացականյանը պատասխանեց, թե չի աշխատում այնպիսի միջավայրում, ուր կարիք կա հայրենասիրության մրցակցության, որտեղ հայրենասիրության պակաս կամ անպատասխանատվություն կա՝ Ղարաբաղի հարցի հետ կապված: Եւ նման ընտրության կարիք հազիվ թե լինի, քանի որ այդ հարցում կոնսենսուս կա ե՛ւ պաշտոնյա մարդկանց, եւ հասարակական կարծիք ձեւավորողների մեջ, այնպես որ՝ նման այլընտրանքների առջեւ կանգնելու առիթ չենք ունենա:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 31.10.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: